



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

6241

Ammonites  
Fossiliferous

Ammonites

Zeuglithon

891.99

U-73

U. S. Geological Survey

1879

ՀՐԱՆՏ ԱՍՏՏՈՒՐ



ՊԱՏԱՆԵԿԱՆ  
ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՇՃՆԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ

1879

Յ91.99

Ա-74

✓ 1299

ՊԱՏԱՆԵԿԱՆ  
ՆԵՐՇՆԶՈՒՄՆԵՐ


0

891. 29

Ա-73

8 կր.

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ



ՊԱՏԱՆԵԿԱՆ

353

ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

ՀՊԱԳՈՒԹԻՒՆ

Արամ Մ. Աշեան եւ ընկեր

Կ. Պոլս Զոգանքճըլըր Զիւնդեւլլե Խան

146  
1001  
2



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ ԵՎ ԸՆԿԵՐ

1879

1779

ՁՕՆ

ԱՌ

ՀԱՅՐԾ ՎԱՂԱՄԵՌ

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԷՈՐԳԵԱՆ

Հայր, ընդունե այս նախերգան մի գեռափթիթ հագիի,  
Ոյր միմանջներ կը գան ձօնուիլ յիշատակիդ պաշտելի.  
Եւ երկինեն, ուր Անմահին գնացիր փարիլ անբաժան,  
Մահդ սղբացող սրբ զաւակիդ առւր օրհնութիւնդ հայրական:

Հ. Ա.

## ՆԱԽԱԲԱՆ

Մանուկ հասակես ի վեր, մի բնական ճկտում  
զգայով առ գրականութիւն, ան ուն սերով յարե-  
ցայ գրական կեանքին. այս սեր խանդավառեց  
'գիս շատ կանուխ եւ ես, ուզելով արտայայտել  
այն զգացումներ եւ մտածումներ որովք համա-  
կուած էի, գրեցի ինչ որ բխեցաւ հոգիես :

Այդ գրուածներ անդրանիկ փորձերն են մի տը-  
կար գրիչի. դորա առաջին բաբախումներն են մի  
սիրտի, որ եռանդով եւ յոյսով է սնւած. դորա նա-  
խազգաց ներշնչումներն են մի հոգիի, որ սիրած է  
դէպ իտեականն սյանայ եւ ծունր կրկնել գեղեցիկին  
եւ ճշմարիտին առջեւ. . . . Ուստի, երբ կը լանդզ-  
նիմ կիւղղեմպեռկի անման եւ անմահացուցիչ մա-  
մուլին յանձնել այս գրքոյկ, կը զգամ թէ սա ապա-  
գայիս կտակուած մի գողտր յիշատակ պիտի լինի,  
որ պիտի պատկերէ միշտ իմ առջեւ կեանքիս գա-  
լունն ծաղկապսակ, ուր այնքան զգայուն ապրեցայ  
եւ աշխարհ երջանիկ . . . .

Քաջ գիտեմ 'գայն, շատ դողդոջ է այս առաջին  
բայլ 'գոր կ'առնում գրական ասպարեզին մէջ, այլ  
կը յուսամ թէ ազգս ներօղամիտ ոգիով պիտի ընդու-  
նի այս գործ, երբ յե թէ իւր հեղինակ մի պատանի  
ուսանող է դէռ, որ ապագային համար կը պատ-  
րատուի :

Գայով աշխատանքիս, ես 'գայն վարձատրուած  
կը նկատեմ արդէն, զի այս մատեան կ'երբայ հայ

ազգին ներկայել Հայաստանի մի անձնուեր գաւակն,  
որ ուխտած է նմա՝ գոնել իւր քիրտ , իւր սիրտ եւ  
իւր կեանք . եւ այդ միակ վարձատրութիւն իսկ բաւ  
է ինն որպէս զի խրախուսէ 'զիս իմ այս աննշան  
մեռնարկի մեջ , ում գուցէ յաջորդեն կարեւորա-  
գոյն աշխատանքներ :

Բերա , 1 Դեկտեմբեր 1878 :

ՀՐԱՆՏ ԱՍՏՏՈՒՐ

# ՊԱՏԱՆԵԿԱՆ ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

Ա.

Պ Պ Ր Ո Ց

( Բերա՛ Նորեկեան վարձարանին մէջ խօսուած ճարտ . )

Հայեր :

Չ'եմ կարող լուռ մնալ այս շքեղ հանդէսի  
առջեւ , որ մի նոր դպրոցի բացումն կ'աւետէ :  
Ուստի , այն անհուն բոցով խանդավառ 'զոր հայ-  
րենասիրութիւնն կ'արծարծէ անձնուէր սիրտերի  
խորն , կը համարձակիմ խօս առնուլ եւ արտայայ-  
տել ձեք առջեւ ինչ որ կը խոհիմ այս հանդիսա-  
ւոր ժամի մէջ :

Անձնուէր դպրոց որ կը կանգնուի , աղնիւ Հա-  
յեր , մի նոր արեւ է որ կը ծագի բարոյական աշ-  
խարհի հորիզոնին վրայ : մի լոյսի տաճար է այն ,  
ուստի կը բխի կրթութիւնն , որ կը դայ նոր յոյսով  
եւ նոր ոյժով տողորել մարդկային ազգն : Թը-  
շուառութիւն եւ նուաստանք , 'զորս տգիտութիւնն  
կը ծնի եւ ոյց առջեւ այնքան ճակատներ կը խո-  
նարհին կորակոր , կը խուսին ուսումին առջեւ ,  
որպէս աղճամուզն արշալոյսին առջեւ : Այո , դպր-



րոցն մի սրբազան յարկ է ուր մարդկութիւնն հիմ  
կը դնէ իւր վերահանդուումի այն սկայ գործի , ոյբ  
աւարտն երջանկութիւննի եւ անդորրի գահակա-  
լումն է . ընկերական խոցերն այդ յարկի տակ  
միայն դարման եւ բոյժ կը գտնեն , զի դա կը բառ-  
նայ քաղցն եւ կը սանձէ կիրքն , որք ոճիրի կը մղեն  
մահականացուն եւ կը գծծեն իւր բարձր կոչում : Այս  
դաստիարակութիւնն մի այդու խթան է որ ցունց  
կը տայ աշխարհին եւ կը յեղափոխէ մարդկութիւ-  
նն . նա լոյս կը դնէ անդ ուր խաւար կայ , յոյս  
ուր վհատանք կայ , ազատութիւն ուր ստրկանք . . . :

Սարուկ ժողովուրդներն մի ազնիւ միջոց ու-  
նին փրկումի . ուսնիլ եւ լուսաւորուիլ : Այդ մի-  
ջոցի դիմելք մեք ալ . ուսումով եւ լոյսով ընունք  
Հայութիւնն : Գարոցներ հիմնելք , թէ կ'ուզելք  
չը սպանել մեր ապագայ և ըզմեզ կաշկանդող շը-  
թայներն մեր զաւակների ալ չը կտակել . դաստի-  
արակութիւն ծաւալելք , թէ կ'ուզելք փրկել մեր  
հայրենիք եւ չը թողուլ որ մեր զաւակներ ալ ապ-  
րին այն ամսոտ երկինի տակ , ուր մեք ց'արգ  
հեծեցինք . կըթութիւննի զէնքերովն զինուելք , թէ  
կ'ուզելք մարտնչիլ ժամանակին դէմ , որ մահա-  
տու հարուածներ կը տայ մեզ այն օրէ ի վեր , ուր  
գահի տեղ շղթայ , եւ թագի տեղ սուգ ունիք . . . :

Ա՛հ , ազնիւ հայրենակիցներ , ներկային մէջ  
աշխատող եւ առաջդիմող ժողովուրդներն միայն  
պիտի կարենան յաղթանակի դասիններով ողջու-  
նել ապագայն . իրական երջանկութիւնն արեւն  
նոցա առջեւ միայն կը փողփողէ այդ յուսածմիտ  
հորիզոնների վրայ , ուր նոցա քրտնաթոր ճակատի  
կը սպասէ փառքի հրեշտակն , ստակ ի ձեռին . երբ

հնչէ ապագայի ժամն , նոցա համար զրկանքն ջնջուած  
պիտի լինի եւ արդարութիւնն պիտի յայտնանակէ ,  
նախապաշարումն փարատած պիտի լինի եւ ճշմար-  
տութիւնն , մերկացած ամեն կեղծ կեցելէ , ա-  
զատօրէն պիտի ծաւալէ իւր վսեմ սկիզբներ , բա-  
սպետութիւնն կործանած պիտի լինի եւ աղքա-  
տն եւ հարուստն , ծիրանի հագած , անխտիր վե-  
հապետական գահն պիտի ունենան իբր պատուան-  
դան : Երանի՛ այդ ազգերի , զի դոքա իւրեանց  
յաջորդների վճիռէն չ'են դողար . դոքա կը ընուն  
այսօր իւրեանց պարա եւ բաց ճակատով եւ հան-  
դարա խիղճով կը սպասեն ապագային , որ պիտի  
գայ անմահ արձաններով փառաւորել 'գայնս : Իսկ  
այն ժողովուրդների առջեւ , որք անցեալի քունու-  
մի կը ննջեն դեռ , ապաւնի դարերն լի են աղջա-  
մուղջով . նոցա համար չը կայ երբէք անդորր եւ  
հանգիստ , նոցա կեանք մի սոսկալի մարտ է տա-  
ռապին և տաժանքին դէմ եւ նոցա երկին սեւ ամ-  
պերով մթադնած է միշտ : Ա՛յ այդ անհոգ աղ-  
գերի , ոյց առջեւ բաց են կորուստի անդունդներն ,  
ուր դոքա պիտի գահավիժին մի օր , մի տխուր յի-  
շատակ միայն թողուլով աշխարհի վրայ :

Այդ ազգերի հետ մեք ալ պիտի կորչիք , թէ  
այսօր անփոյթ մնալք մեր պարտերի առջեւ եւ չը  
հետեւիք այն մեծ յեղափոխումների , որք աշխար-  
հն կ'ալէկոծեն , թէ թողուլք որ Հայութիւնն ալ  
թաղուի յուսահատանքի գերեզմանին մէջ , որ բաց  
է միշտ անյոյսին առջեւ . . . . բայց միթէ կրնա՞նք  
հանդուրժել դեռ որ Արարատի արեւն թշուա-  
ռութիւննի տակ ընկճուած ճակատներ միայն ողջու-  
նէ եւ Հայաստան , աւերակ դարձած , հայ ար-

աօսարով եւ հայ արիւնով ողորուի . միթէ կրնամք  
 Վանդուրթել դեռ որ տղիտուեթիւնն նոր զոհեր  
 սփռէ այն նուիրական հոգի՞ վրայ , որ օրրան եւ  
 տապան լինիլով հայ փառքին , այնքան սուրբ յի-  
 շատակնե՛ր ունի մեզ համար . ոչ , անհնա՛ր է  
 մեզ՝ այդքան անգուեթ լինիլ հայրենիքին դէմ , ոյր  
 զաւակներն եմք ամենս ալ . անհնա՛ր է մեզ այդ-  
 քան անողջայ լինիլ , քանի որ կը հաւատամք թէ մի  
 ժողովուրդի փրկուեթիւնն իւր հայրենասիրուեթիւնն  
 եւ իւր աշխատանքի մէջ կը կայանայ : Ուրեմն դար-  
 թիմք , Հա՛յեր . ա՛լ չը լինիմք անտարբեր , զի հեռի  
 չ'է այն ժամ , որ պիտի գայ նուաստանք եւ ջնջում  
 գուժել դանդաղ ժողովուրդներին . փութամք եւ  
 գործի ձեռնարկեմք , զի անձնիւր վայրկեանի կո-  
 րուստն մի նոր խոչընդոտ պիտի գնէ մեր քայլերի  
 առջեւ , փութամք եւ խիզախեմք դէպ յառաջ ,  
 զի նոր յապաղումներ պիտի գան անխզելի կեր-  
 պով ամրապնդել այն դարաւոր կապեր , որք , սու-  
 ւա՛ղ , Հայաստանն ստրկանքին եւ ձախողանքին են  
 շղթայած : Օ՛ն , ե՛րբայրներ , նոր ոյժ եւ նոր աշ-  
 խոյժ առնումք , միուեթիւն կազմեմք , դաստիարա-  
 կուիմք եւ քաղաքակրթուիմք , եւ փրկուեթիւնն պի-  
 տի գայ գրկե՛լ ըզ մեզ :

Եւ դուք , հայ մայրե՛ր եւ հայրեր , դուք որ  
 ձեր ափերի մէջ կը կրէք հայ ապագայն , դուք յո-  
 րոց կախում ունի հայրենիքի վերածնունմն , գիտ-  
 ցէք 'զայն , դուք ալ մեծ պարտեր ունիք կատա-  
 րելիք , զի ձե՛ր վրայ կ'անկնի մեծագոյն պա-  
 տասխանատուութիւնն . ուրեմն մի՛ դանդաղիք եւ  
 դուք , կրթեցէք ձեր զաւակներ , տքնեցէք անվհատ ,  
 յարատեւեցէք անյողդողդ եւ ձեր քիրտի հետ ձեր

արիւն իսկ զոհեցէք նոցա դաստիարակութիւնի հա-  
 մար , մինչեւ որ կարենաք սպագայի արժան ան-  
 հատներ կազմել նոքօք : Եւ երբ զգաք թէ նոքա ,  
 լոյս քաղելով ուսումի կեդրոններէն , կը գան նոր  
 կեանք եւ նոր փառք աւետել հայրենիքին , օ՛հ ,  
 հրճուեցէք դուք , զի ապառնի Հայութիւնն պիտի  
 անմահացունէ ըզմեզ եւ , ի ծունր ձեր առջեւ ,  
 երախտագիտական օրհներմե՛ր պիտի սփռէ ձեր  
 վրայ :

Այսօր Բէրա մի նոր քայլ կ'առնու առաջդի-  
 մական պողոտին մէջ . այս գպրոց կը գայ ներչնչել  
 մեզ միարանութիւնի ողին , հայրենասիրութիւնի  
 խանդն , ուսումի եռանդն եւ սէրն ազատութիւնի .  
 նա կը գայ յոյսի վարդն փթթեցունել մեր հոգիի  
 մէջ եւ առաջնորդել ըզ մեզ դէպ այն լոյսի բնա-  
 զաւառ , ուր կ'ապրին այսօր քաղաքակիրթ ազ-  
 գերն . նա կը գայ փրկաւէտ սկիզբներ սփռել մեր  
 մէջ եւ , նոցա հետ ողք զիտցած են այդ բարոյա-  
 կան պարտեցէ ծաղիկներ քաղել իւրեանց հոգիի  
 համար , աւելի կրթեալ եւ աւելի երջանի՛կ յանձ-  
 նել ըզ մեզ ապագային :

Այլ ազնիւ Հայեր , երբ այս դպրոց կը հիմ-  
 նուի , նոր պարտեր կը ծանրանան մեր վրայ . այո ,  
 որպէս զի այս դպրոց կարենայ արժանօրէն ընուլ  
 իւր կոչում , մեք կը պարտիմք բարկկարգ պահել  
 'զայն մեր հաւաքական ջանքերով . որպէս զի նա  
 կարենայ մի կատարեալ կրթութիւն աւանդել եւ  
 մի հզօր զարգացում տալ , մեք կը պարտիմք նուի-  
 րել նմա մեր նիւթակառն եւ բարոյական օժանդա-  
 կութիւն . եւ որպէս զի նա ալ , ուրիշ շատ հայ  
 դպրոցների պէս , հազիւ վառած , չը մարի՛ անար-

դիւն, մեք իր պարտիմք խնամել 'զայն անձնուէր  
 եւ անյողողդ, զերդ մայր որ անհուն սէրով եւ  
 անհուն կորովով կը խնամէ իւր զաւակ, 'զոր այն-  
 քան ցաւերով է ծնած . . . :

Եւ, մեծ հաւատով կ'աւետ ձեզ, ո՛ր Բերացի-  
 ներ, երբ այս սրբազայր հայրենիքին նոր փրկիչ-  
 ներ ընծայէ, երբ բռնութիւնն հալածիչներ աղջու-  
 նէ դորա մէջ, արդարութիւնն պաշտպաններ եւ  
 ազատականութիւնն կուսակիցներ, բիւրիցս պիտի  
 օրհնուի ձեր անուն եւ ապագայն սխաի պաշտ-  
 ձեր վեհ յիշատակ :

Բէրա, յունիս 1877 .



ՊԻԱՆԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ-ՊԻԱՆԱՆ  
 ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ\*

Քաղաքակիրթ ազգերին մէջ, մինչ գրող Լու-  
 ներն, աջ ի յաջ, ազատական գաղափարներ եւ  
 ուսում կը տարածեն անդ, ուր կ'իջխեն նախա-  
 պաշարում եւ տգիտութիւն . մինչ ճշմարիտ հան-  
 ձարներն մարդ էակի հոգիին մէջ յոյսի ճաճանչ-  
 ներ կը ցոլացունեն եւ երկինային ներշնչումներով  
 կը հրահրեն 'զայն . մինչ ճարտար գրիչներն կը  
 շարժին եւ կը գան ուղղութիւն դնել այն սիրտե-  
 րի մէջ, ուր կեղծիք եւ մտրում միայն մուտ են  
 գտած . եւ մինչ դաստիարակութիւնն մարդկային  
 հորիզոնի խաւարն կը լրասուորէ մի ջահով, այր  
 բողբին մէջ կը նշմարուին սակետառ « քաղաքակր-  
 թութիւն » եւ « երջանկութիւն », մեք, հայ ժո-  
 զովորդ, աննշան քայլեր միայն կ'առնուիք առաջ-  
 դիմական շաւիղին մէջ : Մահմանադրական առողջ  
 սկիզբներ արդէն տասեօթ ամերէ ի վեր կը սնցու-  
 նեն ըզ մեզ եւ դեռ չ'են կրցած ընձեռել մեզ մի  
 այնպիսի վիճակ, որ նախանձեկի լինի լրասուորում  
 ազգերին առջեւ : Եւ, աւա՛ղ, այդ սկիզբներ ալ,  
 տակաւ առ տակաւ, մեր անտարբերութիւնի առ-  
 ջեւ կը կորցունեն իւրեանց ազդեցութիւն . ա՛լ  
 չ'եմք տածեր այն անղուսպ խանդ, որով տողո-  
 բում էինք տաս տարիէ յառաջ . ա՛լ չը մնաց մեծ  
 մասն այն բազմութիւ դպրոցների եւ տկուսիների,

\*Յ. յս յօդուած հաստատուած է Մ-ը-ը-է-է-է-ի մէջ

որք հիմնուեցան մինչ մեր բարոյական վերածնումի գլոյշալոյսն կը ծագէր Հայաստանի մեայլ հորիզոնին վրայ : Ուստի , մեր արդի վիճակ անկում կը սպառնայ , եւ հայ երիտասարդութիւնն միայն կրնայ փրկել ըզ մեզ այդ անկումէ , եռանդ եւ ըյս սիրուելով , նոր դպրոցներ եւ նոր միութիւններ հաստատելով :

Հայ երիտասարդութիւն . այո , մեր ազգի յոյսերն այդ խումբի վրայ կեդրոնացած են . Հայն ունի մի ապագայ , մի լուսաշող ապագայ , եւ նոր սերունդն պիտի ծնի 'զայն : Հայ երիտասարդութիւն . ամեն անգամ որ այս երկու բառեր դուրս կը թուչին մեր բերանէ , ամեն անգամ որ մեր միտ կը խորհրդածէ նոր սերունդի բարեբար կոչումին վրայ , կարծես կը փարատի այն մթին ամպ , որ կը պատէ մեր ճակատ , եւ յոյսն , որ թեւ կը տայ հոգիքն , կը գայ սիրտի ընձեռել մեր տառապի :

Եւ միթէ հայ երիտասարդութիւնն արժան է վայելել այսքան վստահութիւն . միթէ կը սխալմը փրկութիւն ակնկալելով ի նմանէ . — ապագայն պիտի վճուէ 'զայն : Մեք այժմ սա միայն գիտեմք թէ հայ երիտասարդութիւնն արդէն ըսուկած է համակրանքի եւ խրախոյսի արժանանալ իւր գործերով :

Վկայ են ինձ այն դպրոցներ , որք մի քանի տարիէ ի վեր կը հաստատուին եւ պիտի հաստատուին այսուհետեւ Հայաստանի թշուառագոյն վայրերին մէջ , շնորհիւ ազգային ընկերութիւնների ոյց մէջ նշանաւոր է Արարատեան ընկերութիւնն , 'զոր կազմած են հայրենասէր երիտասարդներ եւ ում կը նվազանց մի աշխուստս էւ հանձարեղ

գրագէտ : Վկայ են ինձ այն գրական դործեր , որք , դեռահաս գրիչների պտուղ , մեր հայրենիքի առջեւ կը պարզեն իւր վիշտեր եւ իւր թերութիւններ , դարմաններ կ'առաջարկեն նոցա եւ առաջդիմութիւն կը քարոզեն անընդհատ : Վկայ են ինձ այն նորածին միութիւններ , որք , մինչ բոլոր աշխարհ տաղնապի մէջ է , կը խոհին կազմակերպել ազգային առաջդիմութիւնն եւ կը տքնին մի ազդու մղում տալ նմա . այս միութիւնների մէջ է Հայ—գրական ընկերութիւնն ալ , ոյր վրայ կ'ուզեմ խօսիլ այս յօդուածի մէջ , պարզելով ազգիս առջեւ նորա նպատակ , նորա կոչում եւ նորա ուղղութիւն , որովք պիտի արգասաւորէ հայ ապագայն :

Ամեն ոք զգացած է այն մեծ կարէկորութիւն , 'զոր դաստիարակութիւնն ունի ժողովուրդների ճակատագիրին մէջ : Քաղաքակրթութիւն եւ վայրենութիւն դորա բարգաւաճանքի կամ նուազումի պտուղն են , ուստի ամեն ժողովուրդ պարտաւոր է վառ պահել իւր մէջ կենսաւէտ ջահն կրթական , պարտաւոր է բարէկարգ դպրոցներ ունենալ եւ մի ծաղկեալ գրականութիւն :

Ուրիշ առիթի թողուլով խօսիլ դպրոցի նկատմամբ , կ'ուզեմ գրականութիւնն իմաստասիրել աստ համառօտ :

Երբ մի ընդհանուր ակնարկ ձգեմք աշխարհի վրայ , պիտի համոզուիմք խիոյն թէ այն ազգեր , որք դաստիարակուած են եւ քաղաքակրթ , մի գրականութիւն ունին զարգացուն եւ ծաւա-

\* Արարատեան ընկերութիւնի ամենապետն էր ոյն տուն Պ. Մինաս Զերազ :

1901  
196



լուն . ուրեմն զիւրին է եզրակացունել թէ այն ժողովուրդներ , որք խաւարի վիհերին մէջ կը հեծեն , պարտաւոր են քաղաքակիրթ ազգերի այդ առաւելութիւն ունենալ , որպէս զի կարենան փրկուիլ : Եւ ի՞նչ կերպով կարելի է մի գրական ազգ լինիլ . թող ներուի ինձ մի քանի բառով բացատրել 'զայն :

Բնական է որ գործն կախում ունենայ գործաւորէն կամ վիճակակից լինի նմա . թէ գործաւորներն բազմաթիւ են , աշխատասէր եւ ճարտար , գործերն ալ կը զարգանան եւ կը ստանան կատարելութիւն . եւ որպէս զի պաշտօնեայներն ունենան այդ յատկութիւններ , պէտք է խրախոյս տալ նոցա , նիւթապէս եւ բարոյապէս : Ուստի գրականութիւնն ալ իւր պաշտօնեայներէ կախում ունի , այսինք գրագէտներէն . գրագէտներն քաջալերելով , մարդ գրականութիւնն քաջալերած կը լինի , եւ այսպէս ահա գրական աշխարհն հետրդհետէ կը ճոխանայ , կը բարդ աւածի եւ՛կը ծաղկի , հազար բարիք բխելով ժողովրդային խաւերին մէջ :

Խոհերս մասնաւորելով սիրելի ազգիս վրայ , կը կրկնեմ . որպէս զի ազատարար հրեշտակն մեզ ալ ժպտի եւ մեք ալ մտնեմք քաղաքակիրթութիւնի սլալատէն ներս , սլարտաւոր ե՛ք կրթական նեկտարով ոգէւորել հայ ժողովուրդն : Ճակատագիրի անգութ հարուածներին տակ ընկճուած , մեր թշուառ հայրենիք այնքան սկտք ունի խրախոյսի , որքան տօթակիզ ծաղիկն անձրեւի : Արդ , որպէս զի Հայութիւնն բարձրանայ իւր անկումէ , ճշմարիտ Հայերն սրբազան սարսուբ ունին , 'զորս ան-

հրածեշտ է նոցա կատարել . այդ պարտերէ մին է խրախուսել հայ գրականութիւնն :

Գրականութիւնն , առողջ եւ լուսաւոր գրականութիւնն , մեր մէջ ալ մերթ կ'արձակէ ճաճանչներ : Հայ ժողովուրդն իւր ծոցի մէջ կը կրէ անմահ հանճարներ : Ամեն ոք կը խոստովանի 'զայս : Այլ , է՞ր արդեօք ամուլ կը մնան դոքա . է՞ր արդեօք հայ գրական աշխարհին մէջ չ'են փայլիւր հրաշակերտներ , որք աղնուացունեն ազգային ոգին . — զի , ցաւով կը կրկնեմ 'զայն , Հայն չը գիտէ դեռ խրախուսել իւր բարէրարներ եւ աստեան կանգնիլ իւր ճշմարիտ բարէկամների :

Այո , Հայն կը թողու որ իւր գրագէտներ , իւր ապագայ փրկիչներ , մարին անլոյս և անյոյս : Մինչ նոքա , անձնուէր եւ անձնուրաց , անվատ կը գրեն , դարման որոնելով ազգային խոցին , նոցա առջեւ խմբագրապետն կը փակէ իւր էջեր եւ տպագրապետն իւր մամուլ : Եւ է՞ր . — զի գրագէտն չ'է կարող վճարել տպագրական ծախքն , զի աղքատ է եւ զի , աւա՛ղ , մեր ազգի մէջ հազուագիւտ են մեկենասներ :

Այսպէս ահա , չը նկատելով բացառիկ սարագայներն , հայ գրագէտն կը ստիպուի լուեցունել իւր ձայն , որ կրնար շանթեր արձակել , կը խեղդէ իւր հանճար , որ կրնար հայկական աշխարհին մէջ փողփողիլ , որպէս աստղ ազմամուղջին մէջ , կը ջախջախէ իւր գրիչ , որ կրնար անմահ հրաշակերտներ ստեղծել : Այսպէս ահա գրականութիւն եւ դաստիարակութիւն անշարժ կը մնան կամ կը չըբանան :

Սակայն չը վհատիմք :

Այո աղէտներ ու՛քին իւրեանց դարմաններ եւ

Հայ—Գրական ընկերութիւնն կոչուած է ընձեռել 'զայնս :


Հայ—Գրական ընկերութիւնն պիտի հրատարակէ մի հանդէս , ոյր էջերն բաց պիտի լինին ամեն լուսաւոր գրիչի առջեւ : Գրագէտների յօդուածներն ի լոյս ընծայելով , նա ոչ միայն քաջալերած պիտի լինի 'զայնս , այլ եւ հայ ժողովուրդն լուսաւորած , հայ գրականութիւնն ծաւալած :

Հայ—Գրական ընկերութիւնն հայ գրագէտների եւ գիտունների աշխատասիրութիւններն պիտի հրատարակէ , պսակելով նոցա աշխատանք եւ ժողովուրդին առջեւ ցոլացունելով հոյակապ հանճարների նշոյլներն :

Հայ—Գրական ընկերութիւնն , հայ գրական աշխարհին մէջ խրախոյս սփռելով , մայր եւ դայեակ պիտի լինի այսպէս նոր հանճարների եւ մի հզօր գործի առաջդիմական , որ պիտի ծաւալէ ազգային դաստիարակութիւնն :

Կնքելով յօդուածս , հրաւէր կը կարդամ ամեն ճշմարիտ ազգասէրի գալ միանալ այդ ակումբի մէջ եւ , հայ գրականութիւնն փրկելով վտանգէն որ կը սպառնայ , հայ աշխարհին երջանկագոյն օրեր պարգեւել :

Բէրա , յուլիս 1877 .



ԱՂԷՏ ԵՒ ՍՓՈՓ

Մի օր , մինչ , երեւակայական յորձանին յանձնուած , կը խոհէի բոլոր այն ընկերական խնդիրների վրայ , որք կը շրջապատեն մեր ճակատագիր , մինչ , յոյսով եւ խինդով լի , սպառնայի հորիզոնն կը դիտէի հողիի այն թագուն աչքերով , որք խաւարին մէջ անգամ կրնան տեսնել եւ մինչ մարդկային վերածնումի երջանիկ դարն կ'երկնէի , ուր ամեն կողմ քաղաքակրթական արեւի ճաճանչներէն պիտի լուսաւորուի , կանգ առի յանկարծ մի աղէկէզ տեսիլի առջեւ եւ գաղափարականէն իրական աշխարհն իջայ , որպէս զի նկատեմ մի սրտայոյզ պատկեր աղէտի . . . :

Մի թշուառ կին տեսայ իմ առջեւ , որ հաց կը մուրար իւր երկու զաւակներով : Տառապի հարուածներին տակ մաշած կը թուէր նա . իւր ճակատ լի էր խորշումներով : Կեանքի վիշտերն կարծես մի մեղմադճոտ քօղ ձգած էին իւր դէմքի վրայ եւ իւր կոյր աչքերի մէջ ցամքեցուցած էին արտօսոյն : Իւր գողդոջ ձեռքերով գրկած էր նա իւր կրտսեր որդեակ , մի հրեշտակային մանկիկ , որ կաթ կը ծծէր մեղմիւ եւ ոյր աչքերի մէջ կը ցօլար անմեղութիւնն : Անդրանիկն , մի հաղիւ վեցամեայ աղջիկ , թախիծի խորշակէն շո՛ւտ խամրած շուշան , կ'առաջնորդէր իւր մայր : Երեքն ալ դժուօր ցնցոտիներով ծածկուած էին .

Կինն անհուն խորհուրդների մէջ թաղուած կը թուէր եւ կարծես մի սեւ ճիւղ էր այդ խար-

տեալ գլուխներն մտ . նա բարձրաձայն կ'օրհնէր 'զայնս , որք ողորմութիւն կը տային նմա , այլ , Աստուած իմ , կը զգայի թէ այդ օրհնեքներ կ'այրէին իւր շուրթեր , եւ թէ այդ հոգիէ անէծքներ միայն կրնային ժայթքիլ աշխարհին եւ արեւին գէմ . . . : Իսկ մանուկներն , միամիտ եւ անգէտ , անբութիւնի գրաւիչ պատկերներ կը ներկայէին . այդ երկու կոյս ճակատների վրայ , ուր մոլութիւնն շէր զրած դեռ իւր կրակէ մատեր , թշուառութիւնն զրոշմած էր արդէն իւր սա՛ռ համբոյր . նոցա ժպիտ մի վսեմ մեղամաղձոտութիւն ունէր եւ նոցա ծիծաղ կարծես կը հեգնէր մարդկութիւնն , որ այնքան հէգ կը թողուր 'զայնս : Աւա՛ղ , նոցա ասպագայ այնքան մուսլ էր , որքան թշուառ նոցա ներկայ , զի տգէտ մնալ դատապարտուած էին նոքա եւ զի աշխարհ վերջապէս պիտի եղծէր այդ էակներ , քճքճելով անարատութիւնի քօղն որ կը ծածկէր 'զայնս , եւ փուչէ պսակ բորբերով նոցա ճակատի շուրջ , ուր կը վայլէր լուսապսակն անմեղութիւնի :

Այս տեսարան եւ այս մտածում խռովեցին 'զիս . զգացի թէ անցեալի ուրուականն , նոր ծպտումի տակ , կը շարունակէ մղել մարդն մինչև նատիրն նուաստանքի . զգացի թէ իրաւունքի բռնաբարումն եւ պարտի պոռնկացումն կը շարունակեն դեռ մարդկութիւնի ճակատին վրայ ոճիրներ քանդակել . . . : Տեսայ , սարսուռ ի սիրտ , թէ ընկերութիւնն , հազիւ ազատած յաւիտենական կուրութիւնի և ընդհանուր թշուառութիւնի անդունդէն , 'զոր անցեալն պեղած էր ստուերին մէջ , նորէն անփոյթ կը մնար իւր գծծումի և իւր քայքայումի առջեւ :

Ընկերութիւնն թշուառութիւնի դատապարտած էր այդ մայր եւ թշուառութիւնն տգիտութիւնի կը դատապարտէր այդ մատղաջ էակներ , որք , երբ խելահաս լինէին , իւրեանց առջեւ մի ընդարձակ ասպարէզ տեսնելով ապօրէն շահի կամ հաճոյքի եւ չը գիտնալով թէ մարդն ո՛ւր կը տանի այն , յախուռն պիտի նետուէին անդ եւ յաւէտ պիտի կորչէին մոլութիւնի եւ ոճիրի վիհերին մէջ : Այո , մարդկութիւնն զահիճ կը հանդիսանար այդ գոթախտների , զի թողած էր կոյրն որ ապրի թշուառ եւ կը թողուր մանուկներն որ ապրին տգէտ :

Թշուառութիւն եւ տգիտութիւն , այդ երկու հնամեայ թշնամիներ մարդկային ազգի , դեռ չը զաղրեցան նախճիրներ սփռելէ եւ դեռ կը ծանրանան ազգերի ճակատազիրին վրայ : Մին , իրր զահիճ ոյր ձեռքն միշտ արիւնով է շաղախուած եւ ոյր սուրն չը գիտէ պատեանին մէջ հանգչիլ , անկում եւ մահ կը սպառնայ մարդկութիւնին . միւսն , ցոյց տալով իւր զսպիւր ճակատ , ուր դարերի նզովներն քանդակուած են դժոխային տառերով , կը ձկտի խեղդել այն բարձր նպատակ , ում հասնիլի համար է որ բանական էակն ստեղծուած է Գերագոյն Լակէն . . . :

Այս խոհերի ստջեւ , մարդ կը սոսկայ եւ կը վշտալի : Ես իսկ , որ այնքան հաստատ հաւատ ունիմ ապառային վրայ , մերթ կը զգամ թէ վշատանքի ճիրաններն իմ հոգի ալ կը արկեն . այլ ամեն անգամ որ աչքս գէպ երկին կը բարձացունեմ , խրախոյսով կը համակուիմ . եւ , վստահութիւնով լի , կը նկատեմ այն լոյսի աշխարհ , 'զոր

աստուգածային մատն ցոյց կը տայ ինձ հետին . —  
ասպագայն . . . :

Այդ հեռաւոր մթնոլորտների մէջ բիւր աստղ-  
ներ կը տեսնեմ այն ատեն , որք կը փայլիլին լու-  
սագեղ եւ , խանդով տողորուած , կը խոնարհիմ  
դոցա առջեւ : Այն խորհրդաւոր կայծեր , 'զորս  
դորա կ'արձակեն անջրպետին մէջ , մեծ յեղափո-  
խումներ կ'աւետեն ինձ : Գորքա կ'աւետեն թէ կա-  
տարելութիւնն պիտի իրականանայ մի օր , ուչ կամ  
կանուխ , թէ կեանքի եւ մտածումի անբռնաբա-  
րելիութիւնն պիտի հաստատուի ընդհանուր տիե-  
զերքէն , թէ անվրէպ է ճշմարտի եւ բարիի յաղ-  
թանակն , եւ թէ հաւասարութիւնն , խտիրն ջնջե-  
լով իսպառ , Կեսարի ափին մէջ պիտի փչրէ մակա-  
նն , պիտի ծուատէ ծիրանին , պիտի կործանէ  
դահն , առաջինն յետին պիտի անէ կամ յետինն  
առաջին : Գորքա կ'աւետեն թէ պիտի գայ մի  
օր , ուր բոլորովին պիտի պարզուի տգիտութիւնի  
թանձր խաւարն , ուր պիտի ջնջուին նախապա-  
շարունակներն , ուր պիտի խորտակուի ժողովուրդին  
վրայ բռնացող սուրն արենաթաթաւ , ուր պիտի  
ջախջախուին այն շղթայներ որովք հզօրն տկարն  
կը կաշկանդէ , ուր աւարտ պիտի առնուն ամեն  
պատերազմ եւ ամեն անիրաւութիւն եւ ուր մարդ-  
կութիւնն պիտի ապրի սէրի եւ միութիւնի սուրբ  
կասկերին մէջ :

Այդ օրի արչալոյսն մի վսեմ երրորդութիւն  
պիտի ողջունէ , 'զոր պիտի կազմեն գիտութիւն ,  
խաղաղութիւն եւ երջանկութիւն , ընդհանրանալով  
բոլոր աշխարհի վրայ : Այդ երրորդութիւն , որ  
պիտի գայ բարձրացունել մարդէ քակն մինչեւ անդ

ուր Աստուած սահման դրած է առաջդիմութիւնին ,  
իտէականի յաղթանակն պիտի աւետէ : Ա՛լ ոչ որ  
պիտի գիտնայ այն ատեն թէ ի՞նչ է տառապանքն ,  
զրկանքն եւ ստրկանքն : Ա՛լ նախանձ , ատելու-  
թիւն եւ թշնամութիւն չը՛ պիտի մնայ : Ազգերն  
իրարի տուած պիտի լինին հաշտութիւնի համբոյրն  
եւ աշխարհ , դժոխք լինիլէ դադրելով , եղեմ պի-  
տի դառնայ . . . :

Այս գեղեցիկ յոյսեր , որք երեւակայութիւ-  
նիս արծիւէ թեւեր կը տային , սփոփեցին 'զիս :  
Տեսած աղէտներիս դարմանն կը նշմարէի , թէ եւ  
ասպագային մէջ , այլ կը գգայի թէ այդ դարմանի  
իրացումն ի մէջ կախում ունի : Այո , մե՛ք կը  
պարտիմք լինիլ ասպագայի տաճարի հիմնադիրներն .  
այո , առանց մեր անյողդողդ ջանքերի առաջադի-  
մելն անհնար է մեզ . ուստի աշխատիմք անդա-  
դար , որպէս զի կարենամք կտակել ասպագային  
մեր բոլոր յոյսերի պսակն . անսասան մնամք խո-  
չընդոտներին առջեւ , որպէս ժայռն անխարխար  
կը մնայ կոհակին եւ մրրիկին դէմ . օ՛հ , գործեմք  
այսօր , զի վաղ պիտի առնուիմք մեր վարձ . . . :

Եւ երբ վերածնիմք խաւարէն ի լոյս , ա՛լ  
մարդկութիւնն իւր նուաստ վիճակի մէջ չը պիտի  
մնայ եւ , բարձրանալով միշտ , պիտի առնու այն  
վեհութիւն , որով ստեղծուած է եւ 'զոր խանգա-  
րած են տգիտութիւն եւ ըռնութիւն :

Էմիլիեան , օգոստոս 1877 .





ԳԻՇԵՐ ԵՒ ԽՈՂԱՆՔ

Լուս էր գիշերն , ստուերներով լի էր երկիր ,  
Երկինն անփայլ թուխ ամպերով էր ծածկուած .  
Մի ամայի դաշտի վրայ , ես , վշտակիր ,  
Կը շրջէի սեւ խոհերով սրգաւորուած :

Աղօտ լուսինն ամպերին տակ սքողուած էր  
Եւ կը զրկէր աշխարհն համայն իւր մեղմ լոյսէ .  
Ոչ աստղ կար , ոչ փողփողում , մեայլ էր եթեր ,  
Որ իւր զեղով յաճախ այնքան զմեզ կը յուզէ . . . :

Յուրս հովն ուժգին հեծիւններով կը հեկեկէր  
Եւ խուլ ձայներ կը հասնէին անտառներէն .  
Բուն հետիւն մերթ կ'արձակէր տըխուր շէշեր ,  
Որք արձագանգ կ'ընդունէին հովիտներէն :

Մի վշտակի երգըն միայն կը լսուէր անդ ,  
Որ աշեակներ մերթ մութի մէջ կը թաղուէին  
Եւ , մերթ ճաճանջ արձակելով իբր աղամանդ ,  
Կարձես ծիծաղ եւ բիւր կայծեր կը սփռէին :

Տերեւներըն կը հծծէին համբոյներով  
Եւ ոտերն ալ խիզախ հովն կը հակէին .  
Շաղն ամպերէն զերդ արտօսոր կաթկթիւով ,  
Կազդոյր կը տար թուփին , ծառին եւ ծաղիկին :

Մինչ բընութիւնն այսպէս թախիծ էր ըզգեցած ,  
Գողզո՞ղ քայլով ման կը դայի ես ոգէյոյզ .

Տրտոււմ էի եւ կը զգայի , արդա՛ր Աստուած ,  
Թէ սիրտիս մէջ ա՛լ մեռած են աւիւն եւ յոյս . . . :

Կսկըծարեր խորհուրդներով լի էր հոգիս ,  
Մինչ , մենաւոր , կերազէի թէ եւ արթուն .  
Կը խոհէի թէ ե՞րբ արդեօք հայրենիքիս  
Պիտի բուժուին կամ դարմանուին վէրքերն անհուն :

Կը յիշէի այն վեհ անցեալ , ուր Հայաստան ,  
Գո՛ւ թագուհի , բիւր պատիւով կը մեծարուէր ,  
Ունէր գանձեր , ունէր դըրօշ , թագ եւ մական  
Եւ արիներ , ոյց կեանք Հային փա՛ռք կը բաշխէր :

Կը յիշէի ես այն օրեր , ուր Հայութիւն ,  
Փոխան սուգի , խինդ եւ խընձիղ ունէր բաժին ,  
Ուր , վեհապանծ , յարգել կը տար նա իւր անուն ,  
'Ձոր հայ քաջեր սրբագործած են խանդազին :

Կը յիշէի այդ յաղթանքի , փառքի՛ օրեր ,  
Ուր հոյ ճակատն աղէտի տակ չ'էր կորանար ,  
Որպէս այսօր , աւա՛ղ , կ'ընկճի նա կարէ՛վեր . . . .  
Եւ ես , յուզուած , արտասուեցի անմխիթար :

Եւ զոչեցի . «Յ'երբ դու արդեօք , ո՞ Հայաստան ,  
Լայն աստղալի պիտի լինիս հուրի , սուրի .  
Ա՛հ , ց'երբ արդեօք պիտի ծածկէ կարմիր պատան  
Քո սէզ սարեր , որք վըկայ են քո անցեալի :

Ա՛հ , ց'երբ արդեօք պիտի մընտո աւերի կոյտ ,  
Առանց կեանքի , առանց լոյսի , անապագայ .  
Եւ ց'երբ արդեօք տըգխտութիւն , Մոլ՛ք անգութ ,  
Չաւակներիդ արիւն եւ մահ պիտի սպառնայ :

Եւ ց'ե՞րբ արդեօք քո տաճարներ, ո՞ հայրենիք,  
Այսպէս մէկեր, անդարդ, անմարդ պիտի թողուին .  
Պրղծուեցան , աւարուեցան դոքա հերիք  
Անիրա խուժէն , անսանձ դուժէն կատաղաղին :

Փուռէ պըսակ իւր խորշումած ճակատի վրայ  
Եւ կուրծքին մէջ հազար խոցեր արենահան ,  
Հայ հողագործն , ա՛հ, ց'ե՞րբ արդեօք պիտ'ունենայ ,  
Վայրազ ֆուրդի հարուածներին եղած կոխան . . . .

Եւ , այլայլած , սարսըռալով , ես կանգ առի ,  
Իբրը նոճի , ում դէմ քամին է յարձակած .  
Արտասուեաթոր աչքերըս վեր բարձրացուցի ,  
Իրկինն արդէն իւր սըխուր քօղ էր թօթափած :

Խոժոռ ամպերն կը ցնդէին հորիզոնէն ,  
Բիւր աստղներ կը փայլէին նազանքներով .  
Յայգի դշտոյն կը փողփողէր , լայն կամարէն  
Հողիւս մէջ լոյս եւ ճաճանջ ծաւալելով :

Մի կայծ շողաց աչքերիս մէջ յողնատըխուր  
Եւ ժպտեցաւ ինձ երկինէն մի հըրեշտակ .  
Յոյսն իսկոյն իւր խինդ եւ խանդ , իւր բոց եւ հուր  
Իմ սիրտի մէջ սփռեց , աշխոյժ եւ անապակ :

Եւ , խրախուսուած խորհրդաւոր ըստփոփներէ ,  
Ես հեռացայ դաշտէն , լըռին ազօթելով .  
Սակայն յաւէտ այդ անմոռաց , սուրբ գիշերէ ,  
Մի քաղցր յուշիկ պիտի պահեմ ես պատկառով :

Էմիրկեան , օգոստոս 1877 .



ՎՈՍՓՈՐԻ ԿԵԱՆՔՆ

Այն կենցաղ , 'զոր կը վարեմ այս բանաստեղ-  
ծական վայրերի մէջ , մի անսպառ աղբիւր է ինձ  
համար . ամենուրեք գեղեկցութիւն եւ ներդաշնա-  
կութիւն կը գտնեմ աստ , եւ կը տողորուիմ գող-  
տը ներշնչումներով :

Բնութիւնն , հիասքանչ պատկեր 'զոր Արա-  
րիչի վրձինն կը նկարէ , վեհափառ երեւոյթներով  
կը պարզուի Վոսփորի մէջ : Այն ծով , որ աչքիդ  
առջեւ կը հայտայ մերթ արեւի ճաճանջներին տակ  
ծփուն եւ մերթ լուսինի շողերին տակ լուսափայլ,  
այն գեղածիծաղ եզրներ , 'զորս կը զարդարեն ա-  
պարաններ եւ պարտկվներ եւ ոյց վրայ խորհր-  
դաւոր խորշեր կը յօրինէ ծովն , այն գիւղակներ ,  
որք այդ եզրների վրայ կառուցուած են եւ ոյց  
մէջէ մինարէների կատարներն կը բարձրանան գէպ  
երկին , այն կանաչ բարձրութիւններ , որք մի եր-  
կար պսակ կը բոլորեն երկնագոյն ջուրերին շուրջ  
եւ , վերջապէս , բնութիւնին հետ շփոթուն այն  
արուեստական ճարտարութիւն , որ սիրալի կեր-  
պով պճնած է այդ վայրեր , այնքան վայելչանք  
ունին եւ այնքան շնորհ որ շատ անգամ , հրա-  
պուրուած եւ զգածուած , կը համարձակիմ կար-  
ծել թէ բոլոր երկրագունտին վրայ չը կայ մի դիրք ,  
ուր այնքան հմայք սփռուած լինի :

Երբ պարակզիս մէջ , կամ ծովափին վրայ ,  
կամ մի ազրիւրի եզրին մօտ երթամ վայելել այն  
հիանալի տեսիլներ , ոյց առջեւ կրացիէլաի սիրա-

հարն, յաւէտ մոռնալով Նաբոլիի գեղեցկութիւնս ներն, սքանչալքով եւ խանդով կը լցուէր երբեմն, ինձ այնպէս կը թուի թէ Վոսփոր գահն է բնութիւնին, ուր դա կը նագի երգներանգ ծաղիկներով պճնուած, որք գարնուն կը բուրնն:

Երբ մի անտառի կամ մի ծործորի խորերէն ինձ հասնին այն ներդաշնակ շեշտեր, 'զորս կը լսեցունեն թռչուններն, երգելով իւրեանց սրեր եւ հրձիւներ. երբ Վոսփորի փոփրալից կոհակներն, որք, զերդ ձերմակ վարդերի փունջներ, կը գեղազարդեն ծովն, եզրին վրայ փշուրին նուազուն մրմուռներով. երբ զեփուսն, սէզներն եւ տերեւներն զգուելով եւ անթիւ համրոյրներ առնուելով շիկնօղ ծաղիկէն, շնչէ քաղցրագին, կը զգամ թէ իմ ազօթքներ ալ, այդ հծծիւնների խառնուած, կ'երթան օրհներգել Արարիչի փառքն եւ մեծութիւնն:

Երբ արշալոյսն, ամօթլեած կոյս որ բիւր հըրապոյր կը սփռէ, ծագի գեղաժմիտ եւ լոյսի հեղեղներ ծաւալէ աշխարհին մէջ. երբ արեւի ոսկեթոյր ճակատն բարձրանայ զէպ հորիզոն եւ, արձակելով իւր անդրանիկ ճաճանչներ, մարդերն աշխատանքի հրաւիրէ. երբ այդի ցօղն գայ ազամանդ սփռել մարդագետինին վրայ եւ պարտեզին մէջ. եւ երբ ծառերն, հովն յուզուած, խոնարհեն իւրեանց սասեր որպէս զի սղջոյն տան առաւօտին, մի անհուն շրացում կը համակէ 'զիս եւ սիրտս յոյզով կը լցուի այս հանդիսաւոր տեսարանի առջեւ:

Աստ ամեն բան խորհրդաւոր խորագէտ ակնարկին առջեւ: Մի վարդ կը տեսնես, այր շուր-

թերի վրայ մի կաթիլ ցօղ կը փայլիլի արշալոյսի նշոյլներին տակ. այդ վարդի բաժակին մէջ մեծ խորհուրդներ թաղուած են: Մի բուն կը տեսնես, ուր մի քանի թռչնիկներ կը հայտան եւ կը ձշեն, սնունդ եւ զգուանք ընդունիլով իւրեանց մայրէ. այդ Բիոբրիկ գրախտաի մէջ, 'զոր նկատելով կը խանդավառուի Գօղէդ եւ Մառիուսն կը յիշէ խոհուն եւ շփոթուն, մեծ գաղտնիքներ կան ի պահ: Վերջապէս այս վայրերի մէջ ամեն առարկայ մի վսեմութիւն ունի. ամպն իւր ծալքերի տակ, կուհակն իւր խաւերի տակ, սոխակն իւր գեղգեղանքի մէջ եւ զեփուսն իւր երգերի մէջ անթափանց խորհուրդներ կը ծածկեն, ոյց առջեւ մարդ չ'է խոհիւր եւ չ'է քններ, այլ կը զգայ եւ կը յուզուի՝ միայն . . . :

Թռչուններն աստ աւելի՛ վսեմ թիւ ունին կարծես. նոքա իւրեանց թեւերի վրայ կ'առնուն իմ միտ, որ նոցա հեռ կը շուէ երկնային հորիզոններն, կը կրկտէ անհունութիւնն, Անձանութիւն կը հանդիպի, կը վրդովի եւ կը զմայլի: Մաղիկներն աստ աւելի՛ հոտանոյշ կը բուրնն. նոցա բոյր կը զովսցունէ հոգիս, որ գո՛գ թաղուիլ կ'ուզէ նոցա կոկոնների մէջ եւ անդ վայելել մի յաւիտենական գարուն. սին փափագ, զի ո՞չ ապաքէն այդ ծաղիկ ալ մի օր մեզ նման պիտի թառամի եւ գլխիկոր պիտի թողու այն շնորհագեղ հայտանք, որ այնքան հրապոյր ունի զգայուն էակին առջեւ:

Եւ այս երազի ժամերի մէջ, որք կը գինովեն 'զիս, երբ մի մանուկի հանդիպում, որ կը ծիծաղէ եւ կը խաղայ անհոգ, երբ տեսնեմ մի կոյս, որ մի անոյշ յիշատակէ զուցէ յուզուած, կը ծպտի

երկնագեղ եւ երբ այս ամեղութիւններէ հետ  
բաղդատեմ այն նենգածէտ մարդեր եւ այն մար-  
մարէ սիրտեր, որք ամենուրեք կը նսեմեն աշխար-  
հն, չեմ կրնար խեղդել հոգիիս վերապայ խոյան-  
քն եւ կը գոչեմ այլայած. «Ո՛ր Աստուած, է՞ր ար-  
դեօք լոյսին հետ խաւար ստեղծեցիր, վարդին  
հետ փուշ, ժպիտին հետ արտօսր . . . »

Օ՛հ, քանի՛ սիրալի է այս կենցաղ ուր մերթ-  
կարծես հոգիով լոկ կ'ապրիմ եւ զգացում կը  
դառնամ համակ. այն հրաշալիքների տոջեւ, 'զո-  
րս բնութիւնն աստ կը շոայլէ մեզ, ինձ այնպէս  
կը թուի թէ կը քեմ երկիրն եւ կը սլանամ դէպ  
երկին, դէպ բնագաւառն անմահութիւնի եւ ա-  
զատութիւնի, թէ կը լքեմ այս անարգ հողակոյս  
երթալ ապրիլ այն լուսազուարթ փաղանդների մօտ,  
որք բոլորովին դորդոջ են սէրով եւ երանութիւ-  
նով. այլ երբ կրկին կ'ընդգրկեմ ցուրտ իրակա-  
կանութիւնն, երբ կը յիշեմ թէ կ'ապրիմ մի աշ-  
խարհի մէջ, 'զոր կը ընուն աղէտ եւ ոճիր, ուր  
կեանքէն յետոյ մահ կայ, ուր օրրանին տապան  
կը յաջորդէ, թախիծով կը համակուիմ. կը զգամ  
այն ատեն թէ ընդ միշտ չը պիտի տեւէ բնու-  
թիւնի այս երիտասարդ նազանք, թէ այն ծա-  
ղիկներ, որք այնքան գեղով են ծլած, պիտի թար-  
շամին վաղ ընդ փոյթ, եւ թէ շատ քիչ պիտի  
ապրին այս գարնադեղ տեսարաններ, 'զորս  
ձմեռն իւր ձիւնէ պատանքով պիտի ծածկէ խկոյն,  
եւ մի սեւ ամպ կը ստուերէ ճակատս, եւ կը  
ախրի՛ հոգիս :

Այս կենցաղ ունի այս տեսակ ցնորներ, ոյց մէջ  
միշտ սփոփ կը գտնէ մահկանացուն. եւ այս ցնոր-

ներ են ահա, որք մուցունելով մեզ մեր դառն  
վիշտեր, չ'են թողուր որ ընկճիմք այն մահատու-  
սլաքների տակ, 'զորս մեր սիրտի կ'ուղղէ ճակա-  
տագիրն :

Էփրկեան, սեպտեմբեր 1877 .



Զ.

ՎԵՏԱՆՅՈՒՓԻՒՆ

ԱՌ

Պ. Զ. Գ.

Ազնիւ բարկկամս ,

Մինչ գերդաստանդ իւր անդամներէ մին ալ կը յանձնէ գերեզմանի տնայազ ծոցին , մինչ մի նորափթիթ ծաղիկ կը խամբի տարածամ եւ մի կոյս ճակատ կը խոնարհի մահին առջեւ , եւ մինչ կրտեր քոյրդ թիւ կ'առնու դէպ անմահութիւն , չ'է ինձ մարթ լուռ մնալ :

Ողբալն սփոխուիլ է . կ'ողբամ ուրեմն . կ'ողբամ այն աննենդ հոգի , որ , սուրբ իղձերով տոգորուն , գնաց յաւիտենական գեղեցկութիւնին տիրանալ . կ'ողբամ այն ազնիւ էակ որ այժմ , երկնային բնագաւառին մէջ բացած իւր թեւեր , իւր սիրելիների կը սպասէ . . . :

Աստուած իմ , քանի՜ անդուծ է մահն . նա կը իլէ ի մէջ ինչ որ սիրելի է մեզ . նա կը նախանձի աշխարհէն երբ տեսնէ մի բարի էակ որ կ'ապրի անդ , եւ իսկոյն կը կորզէ 'զայն անտի . նա դեռ ահասներն կը նախընտրէ մեթ եւ իւր հարուած , շանթի պէս արագ , կը գայ ողբի մատնել մի անբողջ գերդաստան :

Ան ազնիւ բարկկամ , աշխարհ լի է աղէտով . ամեն օր նոր կսկիծներ կը կուտակուին մեր ճակատի վրայ եւ մեր հոգիի խորագոյն ծալերն իսկ արտաբերով կը թրջուին . . . : Ապրիլ , տառապիլ . համանիշ բառեր են սորա , զի կեանքն վիշտի բաժակներ կը մատուցակէ անընդհատ : Մահկանացուն ո՛չ ուրեք նեցուկ ունի աստ . ամեն կողմ տածանք եւ հեծեծանք :


Գիտեմ 'զայն , յորդ արտօսը կը հեղուս դու այժմ : Հոգիդ , սիր'իլի եւ սխուր յիշատակներով համակուած , խոցերով կը լցուի եւ սէրդ կը թաշուի սիրտիդ մէջ . այլ մխիթարուէ՛ , զի քոյրդ գլուտաւ իւր երանութիւն : Նոս զգալով թէ անհնար է երջանկութիւն գտնել երկիրին վրայ , որ մի ցուրտ շիրիմ է թախիծի , ուր մարդկութիւնն կ'ողբայ անդադար , զգալով թէ այս կեանք յաւիտենական այգի առաջին ճաճանչն է միայն եւ թէ մահն է որ անմահ կեանքին կ'առաջնորդէ , գնաց ապրիլ հրեշտակներին եւ աստղներին քով : Նա հա՛րս գրեց լոյսի դրախտին մէջ : Այլ հոգին յանձնուեցաւ մարմինն , ոգին արդէն կը թեւածէր ամպերին մէջ եւ անփուշ վարդեր կը սփռէր Ամենակալին առջեւ . . . :

Ուրեմն սրբէ արտօսը եւ դադրեցու կսկիծդ : Զի կը հաւատաս թէ քոյրիդ յիշատակն անջինջ է եւ պիտի մնայ մեր սիրտերի մէջ , հաւատա նաեւ թէ նա չ'ուզէր որ հառաչներ տանի իւր հետ եւ թախածալից սիրելիներ թողու իւր ետեւ : Օ՛հ , սփոխուէ գու եւ սփոխի գերդաստանդ . քո որդիական գորովի կորով ալ կցէ եւ փութա մայքիդ ցուն ամոքել . . . :

Սակայն մի՛ Մոռնար երբէք քոյրդ . պաշտէ՛  
 միշտ իւր յիշատակ : Նորա հոգի երդն էր անբը-  
 ծութիւնի , նորա սիրտ հայլին էր անմեղութիւնի,  
 եւ նորա ազնուութիւն անհուն էր եւ անպարոյր :  
 Մի նշուլագարդ ապագայ կը սպասէր նմա եւ մա-  
 հն եկաւ խեղդել այդ ապագայ : Այլ երբ ապա-  
 գայի աստղիին մարեցաւ այս աշխարհի վրայ , մի  
 անշէջ աստղ վառեցաւ հանդերձեալին մէջ . քոյրդ  
 հեռացաւ այս մշուշապատ հաղակոյտէ եւ դնաց ա-  
 նեղը փողիողումն վայելել :

Այս հաւատով ահա կը փակեմ նամակս , ներ-  
 կայացունելով քեզ յաւիտենական վշտակցութիւնս :

Էմիրկեան , նոյեմբեր 1877 .



Է.

ՅԱՐԱՏԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ

(Հայ—Գրական Ընկերութեան Լարսնին Ռէփրսուսաճ Տառ.)

Ե՛րայրներ ,

Երբ կը ներկայանամ այս բեմի առջեւ , ուր  
 հզօր ձայներ դեռ երէկ յոյս եւ խրախոյս կը տի-  
 ուէին ձեր մէջ եւ հրաւէր կը կարգային ձեզ միա-  
 նալ առաջդիմական ընդհանուր շարժումին , բո-  
 լոր անձս պատկառով կը համակուի : Կը զգամ  
 տկարութիւնս , եւ կը վհատիմ մի պահ : սակայն  
 ազգիս սէրն , բորբոքսն հրարուիս որ կը միսայ  
 սիրտիս մէջ , կը բառնայ այդ վհատանք եւ կը  
 ստիպէ 'զիս խնդրել ձեր ունկնդրութիւն :

Աշխարհի մէջ , ուր լի են ցաւ եւ դաւ , ուր  
 անձնիւր քայլ ունի իւր խոշ եւ ուր անհուն վը-  
 տանքներ կը սպառնան կեանքին , մարդ կուժիւնն  
 մի զէնք ունի որով կարենայ 'զինք պաշտպանել ա-  
 մեն յարձակումի դէմ .— յարատեւ աշխատանքն  
 է դա : Այդ զէնքով սպառազինուած մարդերն  
 յառաջ կը դիմեն անընդհատ , աներկիւղ կը մտ-

նեն ամեն վիշալից ուղի մէջ, կը խորատուզին ամեն անդուռի մէջ, կը քննեն ամեն գաղտնիք, կը կրկտեն ամեն հորիզոն, ոչ ուրեք կը կասին եւ կը վերանան միշտ դէպ Բացարձակ . . . :

Յարատեւ աշխատանքն, Պարոններ, ազրիւր հանդիսացաւ ամեն բարիքի: Դա ճոխացուց նիւթական եւ բարոյական աշխարհներն, եւ հրաշափերսներ ստղծեց. դա մարդկային սեռն ազատեց նուաստանքի շղթայներէ, աշխարհն վերահաստատեց իւր պատուանդանի վրայ, եւ այսպէս ապահովեց մեզ մի լուսասփիւռ ապագայ: Վերեմն արդար է հռչակել թէ կեանքի գլխաւոր պայմանն է դա եւ խարխիս առաջընթացական:

Երբ մի ակնարկ ձգեմք մեր շուրջ, կը համոզուիմք իսկոյն թէ բնութիւնն իսկ է յարատեւ աշխատանքի օրինակն, որով ամեն բան նոր երեւոյթ կ'առնու, նոր արդիւններ կը մատակարարէ: Այս համոզում աւելի հեռին կը տանի ըզ մեզ. կ'ուսցունէ մեզ թէ աշխարհի քաղաքակրթութիւնն բնական գաղտնիքների լուծումն, ընկերական կնճիւղների խզումն եւ նիւթականի եւ բարոյականի օգտակար ներդաշնակութիւնէն կախում ունի, 'զորս մի յարատեւ աշխատանք միայն պիտի կարենայ իրագործել:

Հանճարն իսկ, առանց յարատեւ աշխատանքի, կը վատաի եւ կը մեռնի, զերդ ծաղիկ որ կը թառամի անցող եւ անարեւ: Հանճարն կը ստեղծէ, այլ դա չ'է բաւ, զի հարկ է արդիւնաւորել այդ ստեղծում, հարկ է մարդկային կեանքին մէջ ներմուծել 'զայն. այս գործի առջեւ պէտք է որ մարդ աշխատանքի սէր ունենայ, կորով ունենայ,

անյողողող կտոք ունենայ, զի աջողումի գաղտնիքն դրցա մէջ կ'ամփոփուի:

Վհատանքի ստու ժպիտին տուցեւ, արդեօք քանի՛ հանճարներ խեղդուած են ց'արդ եւ քանի՛ օգտաւէտ գիւտեր անէի խաւար վիհերին եւ մատնուած . . . :

Ահ, գիտցէք 'զայն, թէ ամեն էակ ունենար այն յարատեւութիւն, որով մեծ մարդերն անմահացան, քաղաքակրթիչ գործն ի յանգ ածուած պիտի լինէր արդէն եւ մարդկութիւնն, իւր փառքի գէնիլին վրայ, պիտի պանծար յաղթական. այլ, աւա՜ղ որ քիչեր կրցան դէմ դնել բախտի հարուածներին եւ քիչեր, հետեւապէս, աջողեցան իւրեանց հանճար օգտակար անել մարդկային ազգին:

Պատմութիւնն լի է բիւրաւոր օրինակներով, որք կը հաստատեն յարատեւ աշխատանքի հրաշներն: Երբ մարդ կարգայ այն անմահ հանճարների կենսագրութիւնն, որք գիւտեր արած են բնական եւ բնագանցական կարգերին մէջ, եւ իմաստասիրէ դրցա կեանք, գիտէ՞ք ինչ պիտի տեսնէ. պիտի տեսնէ թէ այդ կեանքեր ահեղ կոիւներ են անողոք բախտին դէմ մղուած, նաեւ տգէտ խուժանին որ կուրօրէն կը հալածէ մեծ մարդերն. սիտի տեսնէ թէ դրքա լոկ յարատեւ աշխատանքով կրցած են անկործան թումուեր քանդել եւ սկայ պատնէշներ կործանել. եւ այս օրինակներ տեսնելէ յետոյ, ո՞չ ապաքէն ներքի է մեզ հետեցունել թէ աշխարհ նոցա կը պատկանի որք անընդհատ կ'ախտաւորն եւ առաջընթացութիւնն մի անուն է միայն թէ չը լինի յարատեւ աշխատանք:

11

Թող մեզ օրինակ հանդիսանայ ձէյմն Ուօդ , այդ համեստ աշխատաւոր , որ իւր անհատական ճիգերով անփոխարինելի ծառայութիւններ մատուց մարդկոյնն ազգին :

Ուօդ ծնած է Սկովտիաի մէջ , 1756ին : Երբ զովորային դասին կը պատկանէր նա , ուստի նախ մի պարզ գործաւոր եղաւ եւ չափազիտական գործիներ շինել ձեռնարկեց : Սակայն , այդ վիճակի մէջ իսկ , նա աջողեցաւ ուսնիլ բնական եւ գրական գիտութիւններ , եւ այսպէս զարգացունել իւր մտաւոր մշակումս :

Ոչ միայն իրը ճարտար գործաւոր , այլ եւ իրը պարկեշտ գործաւոր համբաւ ստացաւ այն քաղաքի մէջ , ուր կը բնակէր : Նա իւր քաղաքակիցների համարումն զրաւեց : Իւր ծանօթներ սկսած էին հաւատալ իւր հանձարի :

Յարատեւութիւնն դէպ կատարելութիւն կ'առաջնորդէր 'զայն անդադար . հզօր կամք ունէր եւ նախասահմանուած էր վշրել ամեն խոջ եւ խութ :

Մի բարէպատեհ առիթ ներկայացաւ իսկոյն : Կէսգօի համալսարանն Ուօդի յանձնեց նորոգել Նիուքօմբի գրութիւնով շինուած մի շոգէշարժ մեքենայ , որ խանգարուած էր : Այդ մեքենայ էր ահա , որ շարժառիթ վննիւով այդ խոհուն Սկովտիացիի փորձերին , սկզբնապատճառ եղաւ այն մեծարդիւն գիւտի , որ անմահացուց Ուօդի առունն :

Շոգիի զօրութիւնն , թէեւ երկար տատնէ ի վեր ծանօթ , սակայն մինչեւ տասվեցերորդ դարն

չ'էր կրցած մի օգտակար գործածութիւն ունենալ : Այդ դարի մէջ էր ուր մի ֆրանսացի գիտուն , Տընի Բարէն , յղացաւ առաջին շոգէշարժ մեքենայն եւ շինեց առաջին շոգէնաւն : Այլ այդ մեծ հանձար չը կրցաւ վայելել իւր աշխատանքի պտուղն , զի երբ տգէտ եւ չահամու նաւավարներ ջախջախեցին իւր ձեռակերտ , նա , ամեն կողմէ լքուած , յուսահատ եւ աղքատ , թողախտէ բռնուեցաւ եւ մեկնեցաւ այս ապերախտ աշխարհէ :

Բարէնէ յետոյ ծաղկեցան Սէյլիի , Քուելէյ եւ Նիուքօմբի , որք մի լաւագոյն ընդունելութիւն գտան ժողովուրդէն : Քուելէյի եւ Նիուքօմբիի մեքենայներն , որք մի ջրաբաշխական պաշտօն կը կատարէին , տարածուեցան ամբողջ Անկլիաի մէջ :

Այդ մեքենայներէ մին էր Ուօդի յանձնուածն ալ : Անխոնջ աշխատաւորն իսկոյն նորոգեց 'զայն եւ զգաւով թէ այդ անկատար գործի արտադրող սկիզբ , իւր զարգացումի մէջ , կրնար աւելի կարէւոր եւ աւելի օգտակար արդիւններ յառաջ բերել , սկսեցաւ մեքենական օրէններն ուսնիլ եւ շոգիացումի վրայ լիակատար տեղեկութիւններ առնուլ :

Այս աշխատանքների յաջորդեցին երկար խորհրդածութիւններ եւ Ուօդ ծրագրեց արդի շոգէշարժ մեքենայն , 'զոր շինել ձեռնարկեց : Այս ծանր գործի առջեւ , ուր այնքան հանձարներ կատարած էին , այդ պարզ գործաւոր չը վհատեցաւ բնաւ . նա արիապէս քայլեց դէպ իւր նպատակ , զի պղինձէ սիրտ ունէր եւ աննկուն հոգի :

Յարատեւ աշխատանքն յաղթեց վերջապէս , զի թէեւ Ուօդ ստիպուեցաւ մի քանի անգամ նու-



րէն սկսիլ իւր գործ, սակայն տասնամեայ տքնում-  
ներէ յետոյ հասաւ իւր նպատակի եւ աշխարհին  
ընծայեց այն կատարելագոյն շոգէշարժ մեքենայ  
որ, մարդկային ազգին անհուն բարիք աւետելով,  
գրէթէ քաղաքակրթութիւնի ջահն վառեց :

Այդ երկար միջոցի մէջ շատ պատուարներ  
բարձրացան Ուոզի տոջեւ, այլ նա, թէեւ առան-  
ձին մնացած, շընկրկեցաւ երբէք եւ իւր անձ-  
նական օրինակով հաստատեց թէ յարատեւ աշ-  
խատանքի պտուղ են քաղաքակրթութիւն եւ լու-  
սաւորութիւն :

Ուօդ մեռաւ 1819 ին, փառքով ծածկուած .  
սակայն իւր յիշատակ անմահ է եւ պիտի մնայ նո-  
ցա համար, որք կը հաւատան թէ կայ առաջդի-  
մութիւն եւ թէ Ուօդ առաջդիմական բանակի  
առաջապահներէն է :

Արդ, Հայեր, դիւրին չ'է՞ նշմարել այս հո-  
յակապ կեանքի մէջ ինչ որ կ'ուզեմ ներկայացու-  
նել ձեզ այսօր . դիւրին չ'է՞ տեսնել անդ թէ  
կա՞նք եւ յարատեւութիւն հրաշներ կ'արտադրեն  
եւ թէ աշխարհ նոցա կը պատկանի որք վշատութիւն  
եւ վատութիւն համանիշ բառեր կը նկատեն :

Ճէյմս Ուօզն ցոյց տուի ձեզ իբր օրինակ . սա-  
կայն ո՞չ ապաքէն ուրիշ շատ հանճարներ ալ կան,  
որք Ուօզի պէս լոյս սփռած են աշխարհի հորիզո-  
նին վրայ, եւ որք միահամուռ կը հաստատեն թէ  
առաջ յարատեւ աշխատանքի, չը կայ վրկութիւն  
ոչ մի անհատի եւ ոչ մի ազգի համար :

Մի այնպիսի դարի մէջ կ'ապրիմք ուր անձիւր  
որ կը հետեւի մի հզօր ձայնի որ կը գոչէ. «Յառաջ» :  
Ամբողջ Եւրոպա այս ձայնի կ'անսոյ եւ անխոնջ

կ'աշխատի որպէս զի հիմնէ քաղաքակրթութիւնն  
եւ իրագործէ հաւասարութիւն եւ աշատութիւն :  
Բարձր հանճարներ, մեծ անհատականութիւններ  
սուսջնորդ կը հանդիսանան այս նուիրական արշա-  
ւի, եւ անա Եւրոպա կը մօտի տակաւ առ տակաւ  
դէպ այն լուսավառ մթնոլորտ, ուր կը նշմարէ  
իւր նպատակի իրացումն : Նա դարերէ ի վեր ան-  
վհատ կը քայլէ եւ, հրաշալի գիւտերով աշխարհն  
ընուէ յետոյ, կը ձկտիառնուէ այն վսեմ կազմակեր-  
պում, որ վերջին ձոյնն է քաղաքակրթութիւնին :

Իւ իւր յարատեւ աշխատանք կ'ապահովէ թէ  
նա պիտի աջողի մի օր իւր անցեալ եւ ներկայ յաղ-  
թանակներ, պտուղ յարատեւ աշխատանքի, բա-  
ւական ազդու երաշխաւորութիւններ են իւր ա-  
պագայ յաղթանքի . . . :

Երբ պատմութիւնն իմաստասիրեմք, պիտի  
տեսնեմք թէ Հայաստան Եւրոպայէն աւելի քաղա-  
քակիրթ էր երբեմն . արդի եւրոպական ազգերէն  
շատ աւելի առաջդիմած էր նա այն դարերի մէջ,  
ուր քաղաքակրթութիւնն մանուկ էր դեռ : Այլ  
այդ միջոցէ ի վեր գրէթէ ոչ մի քայլ առաւ դէպ  
յառաջ, մինչ Եւրոպա անվհատ ճիգերով կը լու-  
սաւորուէր եւ կ'աղնուանար միշտ եւ սյսօր, տը-  
խո՛ւր ճշմարտութիւն, մի կատարեալ հակապատ-  
կեր կը ներկայանայ Եւրոպայի եւ մեր մէջ . առաջ-  
դիմական սանդուղի կատարին մօտ է նա, իսկ մեք,  
աւա՛ղ, նորա յետին աստիճանների վրայ . . . :

Ա՛հ, է՛ր այսպէս, Հայեր, է՛ր այս ամօթ . ո՞չ  
ապաքէն պարտաւոր եմք անաղարտ պահել այն  
անուն, 'զոր մեզ կտակած են մեր պապեր . օ՛ն,  
գործեմք անյապաղ զի տպագայն պիտի անխօծէ ըզ

մեզ եւ թուր իւ մուր պիտի ժայթքէ մեր ճակատի  
դէմ, թէ շարունակեմք ննջել անփոյթ եւ անզգայ :

Օրինակ առնուեմք Եւրոպան, այդ լոյսի եւ  
կեանքի աշխարհէ, ուր մարդկային ցեղն միշտ կ'ա-  
ռաջդիմէ : Իւր յարատեւ աշխատանք մեր մէջ ալ  
թող արձագանգ գտնէ, եւ յայնժամ պիտի փր-  
կուիմք :

Ապագայն աղջամուղղով լի է մեր առջեւ . ջա-  
նամք պարզել այդ աղջամուղղ . աննկուն եւ արի,  
նետուիմք այն սկայ մարտի մէջ, 'զոր կոչուած եմք  
մղել Խաւարին դէմ: Վերածնիլ, առաջդիմել եւ  
փրկուիլ . այս թող լինի մեր նշանաբան : Հաւատ  
ունենա՛մք ապագային վրայ, քայլեմք անվճատ, ա-  
ռաթուր կոխելով ամեն խոչընդոտ, եւ, լոյսով  
ողողուած, ողջունեմք յաղթանակի հրեշտակն :

Հայեր, ց'արդ անարժան ապրեցանք հայ ա-  
նունին, ջանամք արժան հանդիսանալ նմա այսու-  
հետեւ . չը սպասեմք, ե'ղբայրներ, որ ազգային  
իշխանութիւնն յառաջ վարէ ըզ մեզ . մեր անհա-  
տական աշխատանքի դիմեմք, զի, որպէս կը գրէ  
մի անկլիտացի հեղինակ, անհատական առաջդիմու-  
թիւնն է որ կը կազմէ ազգային առաջդիմութիւնն :  
Նախ ընկերութիւններ կազմեմք եւ միանամք, եւ  
ապա փութամք գործի ձեռնարկել : Աշխատիմք  
յարատեւ, լոյս քաղեմք եւ լոյս սփռեմք, կրթուիմք  
եւ կրթեմք : Եւ յայնժամ մեր մէջ ալ պիտի ծնին  
մեծ գրագէտներ եւ մեծ գիտուններ, եւ յայն-  
ժամ Հայն ալ իւր ճակատի վրայ պիտի կրէ մի լու-  
սապսակ, ուր լուսատառ պիտի փայլին « Յաղ-  
թանակ եւ փրկութիւն : »

Հայեր, թող ոչինչ կասեցունէ ըզ մեզ . օ՛ն,

զինուոր գրուիմք առաջդիմական բանակին եւ փու-  
թամք երկրակալել եւրոպական քաղաքակրթու-  
թիւնն :

Եւ յայնժամ, հաւատացէք ինձ, փրկութիւնն  
պիտի գայ սրակել մեր յարատեւ աշխատանք .  
յայնժամ միայն պիտի օրհնեն ըզ մեզ ներկայն եւ  
ապագայն, եւ մեր անուն անմա՛շ պիտի մնայ հայ  
հոգիների մէջ :

Բէրա, դեկտեմբեր 1877 .



Ը.

ՄԱՂՔԱՆՔ ԱՌԱՌՈՏԵԱՆ

Մինչ տիեզերք կը վերածնի լոյսով լի ,  
Լոյսով նաեւ կը առգորուի իմ հոգի .  
Եւ դիտելով, Հայր, մեծութիւնդ անխմայ ,  
Ի ծուռը , ըզ քեզ կը պաշտեմ ես երկիւղած :

Սա արեգակ որ լուսազարդ կը փայլի  
Եւ սա երկին , անհո՛ւն գ մրեթ աշխարհի ,  
Աիրտէս կը խլեն բիւր օրհնենքներ , որք կը գ ան  
Ծաղիկ սփռել գահիդ առջեւ սրբազան . . . :

Օրհնեա՛լ լեր միշտ , ո՛ր Արարիչ դու հրգօր ,  
Թող քեզ օրհնենք ուղղեն մարդերն ամեն օր .  
Թող քեզ ձօնէ սոխակն անոյշ իւր երգեր  
Եւ զեփուռն իւր մեղմագին մրմունջներ :


Փա՛ռք քեզ , ո՛ր Տէր , ո՛ր գթառատ պահապան ,  
Ձի քեւ ահա կը վերածնի ամեն բան .  
Յաւէ՛տ քեզ փառք , քեզ որ նոր կեանք կը սփռես  
Եւ մեզ նոր օր եւ նոր բերկրանք կ'ընձեռես :

Հեոի՛ պահէ 'զիս աշխարհի նենգերէն  
Եւ թակարդէն եւ փորձանքէն եւ դաւէն .  
Տուր ինձ առիթ մխիթար տալ հիւանդին ,  
Յոյս թշուառին եւ քաջալեր անյոյսին . . . :

Օ՛հ , երբ իմ սիրտ լըցուի դառըն ցաւերով,  
Տուր ինձ , ո՛ր Տէր , խըրախոյս , խինդ եւ կորով .  
Ձեռք կարկառէ ինձ երբ չ'ունիմ մխիթար  
Եւ երբ հեծեմ կսկիծներով անհամար :

Ո՛չ , մի՛ լքեր , մի՛ թողուր 'զիս անպաշտպան  
Այսօր եւ վաղ , մինչեւ այն ժամ ուր սեւ մահն  
Գայ 'զիս խլէ այս ազէտի աշխարհէ  
Եւ անհունի սփիւանին 'զիս յանձնէ . . .

Բէրա, զեկտեմբեր 1877



11 Թ.

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ա.Ս.

Պ. Յ. Ա.

La vie portée à deux,  
c'est la vie heureuse.\*

Victor Hngo.

Ազնուատոհմ բարէ կամս ,

Ձեր մտերիմ բարէկամ Պ. Յ. Պ. կ'իմացունէ ինձ ձեր մօտաւոր ամուսնութիւն , 'զոր շնորհաւորելով կը փափագիմ մի քանի բառ գրել այդ նկատմամբ . գիտեմ որ չը պիտի աջողիմ լիովին արտայայտել իմ զգացումներ , սակայն պիտի փորձեմ :

Դուք ց'արդ առանձին ապրեցաք , առանձին կեանքի բոլոր մրրիկներին դէմ . առանձին անցուցիք այն անոյշ ժամեր , որք մանկութիւնի ժաւառն կեանքն կը ընուն . առանձին աշխատեցաք եւ առանձին սառապեցաք . զգացիք թէ մարդ լծակիցի պէտք ունի եւ թէ երիտասարդն առանց ընկերուհիի չը կրնայ երջանիկ ապրիլ . զգացիք 'զայս եւ կը փութաք ամուսնանալ :

\*Եր'անիկ կեանքն այն է 'զոր Լրկու Էսկներ կը տանին :  
ՎԻԳՊՈՒ ԻԻԿՕ .

Մի վե՛մ ժամ ձեզ կը սպասէ , աղիւ բարէկամ . ձեր յաւիտենական ուխտի ժամն է , որ կը մօտի ահա . գիտցէք զգալ նորա մեծութիւն , գիտցէք վայելել 'զայն . . . :

Երբ , ծուներ կրկնած , երգնուք յաւէտ սիրել այն էակ որ կը գայ սիրտի եւ խինդ աւետել ձեզ , երբ , ձեր ձեռք իւր ձեռքի մէջ եւ ձեր ճակատ իւր ճակատի առջեւ , ուխտէք մի կամք եւ մի հոգի միայն ունենալ , յիշեցէք թէ դուք կը սատարաստուիք հիմնել մի նոր ընտանիք եւ թէ ձեր միացումի վրայ մի Աստուած կայ որ կը ժպտի եւ օրհնե'նք կը սփռէ . յիշեցէք դուք 'զայս եւ այնպէս մտէք այն նոր կեանքի սեմէն , 'զոր ամուսնութիւնն կը բանայ ձեր առջեւ :

Մի նոր ասպարէզ կը ներկայանայ ձեզ . անվճատ ընթացէք անդ . արհամարհեցէք ամեն խուժորդայ իսպիան լինիլ ձեր ընթացի , առ ոտն կոխեցէք ամեն խոշ որ գայ կատեցունել ձեր քայլեր եւ այնպէս առաջեցէք կեանքի պարտէզին մէջ , ուր ամեն կողմ բերկրանքի ծաղիկներ պիտի դունէք . . . :

Դուք ամուսին պիտի լինիք խոյն , այսինք ձեր ճակատագիր մի ուրիշ ճակատագիրի պիտի կըցէք , ձեր հոգի մի ուրիշ հոգիով պիտի լծորդէք եւ յաւիտենապէս պիտի միանաք սէրի սուրբ կապերով մի այնպիսի էակի հետ , որ ձեր ապագայի արեւն պիտի լինի :

(Տ) , մեծ է ամուսինի պաշտօնն , այնքան մեծ որքան խորհրդաւոր է ամուսնութիւնն : Նա մի սեբուանդի հիմերն կը դնէ . մի ամուսին մի երկրորդ Աղամ է , որ կը գայ մարդկութիւնն շորոզել :

Գիտցէք անթերի կատարել ձեր պաշտօն :

սիրեցէք ձեր լծակից, զի սէրն է որ երջանկութիւնի  
 իտէականն կ'իրադ ործէ : Նյութական պարտերէ  
 զատ բարոյական պարտեր ալ ունիք . դուք կը  
 պարտիք ներշնչել ձեր ընկերուհիի այն ոգի ,  
 որ ըզ ձեզ կը վառէ . դուք կը պարտիք ներշնչել  
 նմա ինչ որ ճշմարտ է , ինչ որ բարի եւ ինչ որ  
 աղնիւ , զի պիտի դայ մի որ ուր մա՛յր պիտի լինի  
 նա . եւ դուք գիտէք թէ քանի՛ մեծ է մայրի կու-  
 չումն :

Յոյժ երջանիկ էք դուք, ո՛ր երկտասարդ, զի ձեզ  
 համար կեանքի հարուածներն ա՛լ նշանակութիւն չը  
 պիտի ունենան . երբ վճատիք , պիտի ունենաք մի  
 ժպիտ որ խրախոյս տայ ձեզ . երբ պարտասիք, պի-  
 տի ունենաք մի սիրարոյր ակնարկ որ վարձատրէ  
 ձեր վաստակ . երբ տառապիք , պիտի ունենաք մի  
 անձնուէր սիրտ որ ձեր ցաւեր սփռի . օ՛հ , այո ,  
 երջանի՛կ էք դուք . . . :

Եւ պիտի դայ մի որ ուր ձեր միութիւն մի նոր  
 էակ պիտի արտադրէ , պիտի դայ մի որ ուր հայր  
 պիտի լինիք դուք եւ պիտի կրէք ձեր ճակատի վրայ  
 այն փառքի ստակ , 'գոր Արարիչի ձեռքն կր բու-  
 լորէ հայրերի եւ մայրերի ճակատին շուրջ :


Երբ այդ ստակ գայ պճնել նաեւ ձեր գլուխ,  
 գիտցէք թէ Նախախնամութիւնի փոխանորդն պի-  
 տի լինիք ձեր զաւակների համար . այդ դեռատի  
 էակների ապագայն եւ փրկութիւնն ձեր արեւրի  
 մէջ պիտի լինին , սւտի յայնժամ կը պարտիք կրկ-  
 նապատակել ձեր փոյթ : Ամուսին եւ հայր , դուք  
 կեանքի ծանրագոյն եւ քաղցրագոյն սաշտօծներն  
 պիտի վարէք : Հանդարտ խիղճով կատարեցէք ձեր  
 կոչում , եւ պիտի վարձատրուիք :

Յտուել խնամով դատարարեցէք ձեր զա-  
 ւակներ . ազգային զգացումով վստեցէք 'զայն .  
 ազգին այնպիսի անհատներ նուիրեցէք , որք գիտ-  
 նան փառք եւ անմահութիւն բերել նմա :

Նյութէն յետոյ կրթութիւնն սնունդ կը մատա-  
 կարարէ մանուկին . մի՛ զլանաք նմա այդ սնունդ .  
 նորա հոգիի մէջ կանուխ ջանացէք մտցունել բա-  
 րիի ճաշակն . նորա սիրտ , ուր անմեղութիւնն կը  
 դնէ իւր բոյն , գեղեցիկ զգացումներով լցէք : Սի-  
 րեցէք 'զայն , կրթեցէք 'զայն , սակայն միշտ իբր  
 հայր որ ապագայն կը նախատեսէ :

Եւ երբ ձեր զաւակներ անմահանան եւ ձեր  
 անուն անմահացունեն , փառք եւ պատիւ վայելեն  
 եւ հայ անունն ոսկէզօծեն մեծ եւ անմտաց գոր-  
 ծերով , յայնժամ դուք եւ ձեր լծակից , պիտի  
 փառաւորուիք եւ պիտի հրճուիք , եւ ձեր ընտա-  
 յիք մի նուիրական տաճար պիտի դառնայ , ուք  
 ապագայն օրհնենքի խուհիեր պիտի ծխէ :

Քերտ , յունվար 1878 .



Սակայն հալածուիս գուցէ , գիտցիր 'ղայն ,  
Ձի ազատամիտ չ'է սիրեր ներկայն .  
Իսկ թէ քեզ այսօր լոկ անէ 'ծք իսկ տան ,  
Վարչին ըստասէ . անդ է քո վարձան :

Բէրա , մարտ 1878 .

Ժ .

ԱՌ ՄԻՍՍԱԳ


Ապրէ , ո՞ Սիսակ , օ՛հ , միշտ ապրէ դու ,  
Լէր հայրենիքիդ արեւ լուսատու .  
Կը սիրես քո ազգ , փառաւորէ 'ղայն .  
Մի՛ յուսահատիր , քոյդ է ապագայն :

Դու հոգի ունիս , դու հանճար ունիս ,  
Անմահութիւնիդ կրկին՝ն աւետիս .  
Գրէ անյողդողդ , քե՛զ կը սպասէ փառք ,  
Մի՛ կասիր երբէք . սի՛րտ առ , ո՞ Սիսակ :

Քերթօղի պրսակ ունի քո ճակատ ,  
Ստեղծէ ուրեմն , օ՛ն , կոչումդ է այդ .  
Առ ձեռքըդ քրնարդ եւ վիշտերն երգէ  
Տառապեալ ազգիդ , որ մի՛շտ կը հեծէ . . . :

Ա՛հ , թըլուառ է Հայն , ըստ'փ տուր նըմա  
Նա վէրքեր ունի , դարման տար նոցա .  
Հանճարըդ ասպա՛ր արէ հայ կուրծքին ,  
Ու՛մ բիւր սըլաքներ կ'ուղղէ թշնամին :

Ամեն բան զոհէ հէգ հայրենիքիդ ,  
Ձի նա պէտք ունի քիրտիդ եւ կեանքիդ .  
Երբ կեղեքեն 'ղայն , իւր վըրէժ հանէ .  
Գըրիչ ունիս դու . — այդ ալ մի սուր է . . . :



ԺԱ.

ԵՐԱՆՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌ.

Պ. Մինաս Չերազ.

Մըբէի դաստիարակս,

Մինչ կ'այցելես Եւրոպան, այդ կեդրոն քու-  
 զարթարթական ուր մարդկութիւնն զէպ իւր ազ-  
 նուացում կը դիմէ սկայաքայլ, մինչ կ'անցնիս այն  
 սիրելի Ֆրանսաէ որ սնցուցած է իւր ծոցի մէջ  
 ա՛յնքան մեծ մարդեր եւ ա՛յնքան անյողողղ զոր-  
 ծաւորներ, մինչ կը տեսնես Բարիզն, այդ հանճարի  
 եւ արուեստի ոստան, ուր մարդ անթիւ հրաշա-  
 կերտի կը հանդիպի եւ մինչ կ'ողջունես անկլիական  
 ազատ ոգին որ կը հիւրընկալէ ըզ քեզ, ես, Բիւ-  
 զանդիոնի խորերէն, ըզ քեզ կը յիշեմ եւ քե՛զ կը  
 գրեմ:

Յիշատակներ կան, որք կեանքն սփոփով եւ  
 անոյշքով կը ընուն. քո յիշատակ ալ այդպէս է:  
 Դու, ազնուախոհ դաստիարակս, մի բարեբար հը-  
 բեշտակ եղար ինձ, որ բարոյապէս վերակենդա-  
 նացուց 'զիս. չորս տարիէ յառաջ, մինչ մի պա-  
 տանեակ էի հազիւ երկոտասանամեայ, պատիր գա-  
 ղափարնբրի ծոցէն խելով 'զիս, մատնանիշ արիւր  
 ինձ ինչ որ ճշմարիտ է եւ ինչ որ վսեմ: Մանուկ  
 հոգիս, իբր ծաղիկ ապառաժի վրայ ձգուած, նա-

խաղաչարումի եւ տղիտութիւնի քառաներին մջ  
 էր թաղուած, եւ դու, զերբ արեւ լուսասփիւս,  
 ծագեցար սիրտիս մթին հորիզոնին վրայ: Այն ա-  
 տեն, մի խորհրդաւոր յեղափոխում յեղաչեց  
 հոգիս, 'զոր կը շլացունէին ոգէտու ճաճանչներդ-  
 մի մարտ սկսեցաւ իմ մէջ, մարտ լոյսի խաւարին  
 դէմ, մարտ ներկայի անցեալին դէմ. երկար չը  
 տեւեց դա, զի նորն յաջորդած էր փցունին, զի  
 խաւարն տեղի տուած էր լոյսին. եւ յաղթանակն  
 քոյդ էր, ո՛ր վեհօգի խորհրդատու:

Այդ օրէ ի վեր, հոգիս ճշմարտին յարեցաւ,  
 հայրենասիրութիւնն նոր բոցով հրահրեց 'զիս եւ  
 սկսեցայ ընթանալ լոյսի եւ իրաւունքի այն ար-  
 դիւնաւաւան, այն ծաղկաւէտ, այն փրկաւէտ շաւիղի  
 մէջ, որ կ'երկարածուի զէպ մի նպատակ երկ-  
 նային. — երջանկութիւն մարդկային ազգի: Այդ  
 օրէ ի վեր զբացի թէ մի մոլորեալ էի ես, թէ դու,  
 զերբ ազատարար որ սկիհանի վիշերէն մի մաշա-  
 մերձ էակ կը փրկէ, խաւարի անգունդէն խլած  
 ես 'զիս, եւ, երախտագիտութիւնով լի, յաւի-  
 տենական անձնութիւնն ուխտեցի քեզ. . . :

Այժմ, մինչ կը տեսնեմ թէ զէպ Եւրոպա  
 ճամբորդութիւնդ քաղցր տեսութիւնէդ եւ խրատ-  
 ներէդ կը զոկէ 'զիս, մի սլահ սիրտս վիշտով կը  
 լցուի. սակայն կը սփոփուիմ իսկոյն. այն գործ ո-  
 ում կը ձեռնարկես, բերկրանքով կը ընու 'զիս.  
 Դու Եւրոպա՛ կ'երթաս որպէս զի պաշտպանես մեր  
 հայրենիքի արդար դատն, ի՛նչ մեծ աւետիս. . . :

Դու կ'երթաս, մի ազգասէր եկեղեցականի  
 ընկերացած, որպէս զի ազատամիտ Եւրոպային  
 յայտնես այն սղէաներ, որք չինք զարեբէ ի վեր

կը մթագնել հայ աշխարհի հորիզոնն . դու կ'երթաս պատմել քաղաքակիրթ աշխարհին այն բռնութիւններ , ոյց տակ կը հեծեն Հայկի թոռերն , անխնայ կեղեքուած անողո՞ք Քուրդէն . դու կ'երթաս եւրոպական պետութիւններէ արդարութիւն պահանջել եւ գութ հայցել թշուառ Հայաստանին համար , որ ստրկանքի շղթայներին տակ կը հոգէլարէ , ոյր իրաւունքներ կը բռնարարուին , ոյր բողոքներ անլսելի կը մնան . . . . օ՛հ , ի՛նչ մեծագոյն մխիթար հայ ազգասէրներին համար . . . :

Եւ մեք ձեզ կը պարտիմք այդ մխիթար , ո՛ Հայաստանի անձնուէրներ , ձեզ որ կը գաք նոր յոյսերով ընուլ ըզմեզ եւ լուսազարդել մեր անլոյս ապագայ , ձեզ որ կը աքնիք հայ հայրենիքի խոցերին ազդու դարմաններ զտնել եւ փրկու մի գրօշն ծածանել Մասիսի կատարին վրայ :

Ըզքեզ ճանաչած օրէս ի վեր , սիրելի դաստիարակս , մեծ ակնկալիքով կը հաւատայի ապագայիդ . չ'էի սխալեր , սկսար ահա . . . . գրիչ հարկէ , գրիչ կը շարժես եւ կը պարզես հայկական դատն մոռացկոտ Եւրոպայի առջեւ . լեզուհարկէ , կը պերճախօսես եւ կը նկարագրես մեր դժբախտ վիճակ . անձնական գործերդ կը թողուս ազգային գործին համար . անձդ ազգիդ կը նուիրես , ամեն զոհողութիւն յանձն կ'առնուս , միայն եւ միայն , զի կ'ուզես ուրախ եւ անկախ տեսնել հայրենիքդ :

Մի՛ վշատիր , ագնի՛ւ Զերազ . Աստուած սահմանած է ըզքեզ Հայաստանի մի փրկիչն լինիլ , ուստի մի՛ կասիր կոշու միդ առջեւ : Մի վարձ ունիս , որ վարձերի վսեմագոյնն է .— անմահութի՛ւն . ուրեմն մի՛ ընկրկիր , մինչեւ որ Արամի սերունդն

փրկուի , մինչեւ որ հայրենիք երջանիկ վիճակի մէջ ողջունէ այն վեհ գլուխներ , որք ազգային վերածնունմն յղացած եւ իրազործած են : Եւ յայնժամ ապագայ Հայութիւնն պիտի պանծացունէ նաեւ ըզքեզ , պիտի մեծարէ անունդ եւ հայ մայրերն ըզքեզ ցոյց տալով իւրեանց զաւակների , պիտի գոչեն . « Զանացէք այս մեծ հոգի ունենալ , այս հըզօր կամք , այս վե՛մ անձնուիրութիւն . . . »

Թէեւ պատանի եմ դեռ , սակայն ուսած եմ հայրենիքս անձէս աւելի սիրել . ուստի երբ կը տեսնեմ թէ երիտասարդ սիրտիդ խանդովն զլու վառելէ յետոյ , տարարախտ ազգիս կը զոհեո շահեւ կ'երթաս իւր բարիքի համար քիրտ հեղուլ օտար երկիրի վրայ , կը զգամ թէ մի երկեակ երախտագիտութիւն օրհնենքի վարդեր կը խլէ հոգիէս , վարդեր որք կը գան սրակ հիւսել ազնիւ ճակատիդ . . . :

Բէրա , ապրիլ 1878 .





ԺԲ.

ՄԻ ՈՂՁՈՅՆ ԱՌ ՄԱՅԻՍ

Մայիս, ժպիտ իշուրթ, կը գայ վարդ եւ զարդ սփռել ամեն կողմ: Աշխարհ կը հայտայ, բնութիւն կը փթթի եւ հողին, բիւրարթեւ արծիւ, դէպ ամպերն կը թռչի, որպէս զի հրեշտակներին ձայնակցիլով օրհնե՛նք ուղղէ առ Աստուած:

Երէկ մայիսի առաջին օրն էր: Այդ օրի մէջ, ուր կարծես ամեն բան զուարթութիւն կը զգեսնու եւ ամեն սիրտ հրճուանքով կը լցուի, ոչ ոք կ'ուզէ զիրկ մնալ գարնային շնորհների վայելումէն: Ուստի մեք ալ որոշեցինք քաղաքի աղմկալից վայրերէն հեռի, բնութիւնի ծոցին մէջ տօնել այդ օր, եւ անդ ականատես լինիլ մայիսի գեղաշուք փթթումին . . . :

Առաւօտ էր դեռ, եւ երկու կառքեր, որք գերդաստանս եւ 'զիս կը կրէին, կը սահէին արդէն այն ուղիէ որ Բէրաէն կ'երկարածդ ուր մինչեւ Պէոյիւք—Տէրէ: Կէսօրին էփրկեան հասանք, ոյր հանրային պարտէզին մէջ մի շրջան արինք հետփոս: Արփօրի այդ մաս յոյժ սիրելի է ինձ. էփրկեան օրրանս տեսաւ եւ առաջին ճիշտ լսեց. անդ նշուլեց կեանքիս արչալոյսն, անդ առաջին անգամ զիտեցի երկինն, երկիրն, բնութիւնն իւր բոլոր վեհափառութիւնով: Այդ վայր կը հմայէ 'զիս .

այդ բլուրների վրայ, որք այսօր բիւր յուշիկներ կը զարթեցունեն իմ մէջ, իբր երազ անցած է մանկութիւնս. քանի կը յիշեմ այն անվիշտ տարիներ, 'զորս անդ սահեցուցի, աչքս արտօսող կը լցուի եւ սիրտէս մի հառաչ կը սլանայ դէպ երկին: Աստուած իմ, ի՛նչ երջանիկ էի այն ատեն երբ դեռ չ'էի ճանաչեր աշխարհն, 'զոր մանկական անգիտակցութիւնն սքողած էր իմ առջև, երբ դեռ չ'էի գտար թէ այս կեանք մի դանկուած է արտօսրի եւ աղէտի . . . : Այո, ցաւ չ'ունէի այն ատեն, զի դեռ աչքերս չ'էին կրնար թափանցել ընկերական խաւերէն ներս եւ տեսնել թէ մինչեւ ո՛ւր նուաստացած է մարդկութիւն, թէ քանի՛ սոսկալի ոճիրներ կը գործուին աղջամուղջին մէջ, թէ քանի՛ կեղծիքներ եւ անիրաւութիւններ կը թաղուին սեւ պատանների տակ եւ թէ քանի՛ անբոյժ խոցերով ծածկուած է ժողովուրդի կուրծքն: Ա՛հ, ի՛նչ չուտ անցան այդ զուարթ օրեր ուր տառապ եւ հառաչ չ'էին գար խռովել կեանքս խաղաղիկ եւ ուր, կարծես այս տիղմի աշխարհէ վեր բարձրացած, այնպիսի մթնոլորտների մէջ կը շնչէի, որք ոչ խաւար ունին, ոչ ալ մորիկ . . . : Քանի՛ անիմաց ես, ո՛ր Նախախնամութիւն, երբ կը թողուս որ այս երանութիւնի ժամեր արծիւէ արագ թռչին, մինչ տառապի վայրկեաններն կրեայէն դանդաղ կը քայլեն: Այլ, աւա՛ղ, ամենս ալ ստրուկ եմք ճակատագիրին. համակերպիլ եւ հպատակիլ, կրել եւ լուել. ահա այս է մեր պարտ, 'զոր հարկ է մեզ շնուլ անտրտունջ . . . :

Մեր ամարոցի պարտէզին մէջ ալ շրջագայեցանք, ծաղիկներ քաղեցինք, փունջեր կապե-

ցինք և մեկնիցանք զէպ Քեաղըտ — Խանէ : Էմիր-  
կեանէն Մասլաբ տանող ուղիին վրայ, աչքերս մի  
հիասքանչ տեսիլ ընդ գրկեցին, որ խորին կեր-  
պով յուզեց 'գիս :

Փոքր — Մասլաբի հիւսիսային եզրն կը գտուէինք :  
Երկինն, անհուն կապուտակ ուր հազիւ կը նշմա-  
րուէին մի քանի թափառկոտ ամպեր, իբր խո-  
հանքի ասպարէզ կը պարզուէր մեր աչքերի առջեւ,  
որք կը շանային իւր պայծառութիւնէ : Մի կողմէ  
կ'երեւէին Փոքր — Մասլաբի ծառերն, որք շուք կը տա-  
րածէին մի օղբիւրի վրայ : միւս կողմէ կը նշմար-  
ուէին Մրենիաի լեռնադաշտներն, 'զորս կը պծ-  
նէին սէզի եւ ցորեանի գալարագեղ գորգեր :  
զեփիւսն դոցա կանաչ թեւերի վրայէ կը սողօր եւ  
կ'անցնէր օձապտոյտ շրջաններ գծելով : Հեռին,  
եւրոպական եւ ասիական ծովափներին մէջէ,  
Վոսիորի ալեակներն կը շողշողային արեւի ճաճանչ-  
ներին տակ եւ մեր աչքի առջեւ ծովային ասպունք  
կը ներկայէին կայծկլտուն : իւր ծոցերէ մին, Մրե-  
նիաի լեռնակներէն շրջապատուած, մի հանդարտ  
լճակի ձեւ կ'առնուր : կարծես մի կապոյտ շքշ-  
էր այն, 'զոր Աստուած տարածած էր այդ բլուր-  
ների ստորտան : Մի զովարար սիւք կը փչէր ան-  
շունչ եւ կը բերէր մեզ այն եղեմեան բուրուժ-  
ներ, որք կը լնուն դաշտերն, երբ գատուն եւ  
մայիս զան ուղմունել բնութիւնն եւ նոր կեանքով  
տողորել 'դայն : Անհնար է որ հոգին չը յուզուի  
այս տեսարանների առջեւ, ոյց մէջ վսեմն գեղե-  
ցիկին եւ գեղեցիկն երկնայինին հետ կ'օրրուին  
գիրկ ի գիրկ, եւ հէգ մարդ կութիւնն, 'ողողօջ  
շեշտով, մի քանի խորհրդաւոր բառեր չը փոխա-

նակէ՛ Անմահին հետ . . . :

Բայց որքան շուտ կը սահի կառքն . . . :

Մասլաբ հասած եմք արդէն : Անդ մի քանի  
վայրկեան հանգչիլէ յետոյ, նորէն ճամբայ ելանք :  
Այսպէս — Աղայի կայսերական պալատին առջեւէ գէպ  
Քեաղըտ — Խանէ ուղղուեցան կառքերն : Վերջա-  
պէս երեւեցաւ 'զայն ոռոգող սիրուն գետակն, որ  
Ուկեղձիւրի մէջ կը թափի : Մի կամուրջէ անցանք  
եւ գնացինք Քեաղըտ — Խանէ գիւղն, գետեզրին  
մտա նստիլ : Էս, լռին եւ խոհուն, Տիկին Ուոյլէ-  
զի Եղբայր-Էմ անշունչ-խո-թիւն անուն բարոյական  
վէպն կը կարգայի : Այդ գիրքի տեսարաններն  
եւ բնութիւնի պատկերներն, իրարի հետ մրցիլով,  
հոգիիս մէջ մի այնպիսի զգացում կը դնէին 'զոր  
չ'եմ կարող արտայայտել :

Երեկոյ եղած էր արդէն, երբ այդ գետեզրի  
վրայ ընթրելէ յետոյ, նոր պտոյտներ արինք կու-  
քերով, որք վերջապէս ուղղուեցան դէպ այն զա-  
ոսիվեր, որ Բէրա կ'առաջնորդէ : Երբ բլուրի գա-  
գաթն հասանք, կանգ առին նոքա : Անկարելի կը  
թուի ինձ նկարագրել ինչ որ պարզուեցաւ աչքիս  
առջեւ : Երբ այդ վայրէ մի ակնարկ ձգեցի շուրջս :

Արեւն, արդէն մի ժամէ ի վեր մարն մտած,  
կ'երթար լուսաւորել ուրիշ երկիրներ : Մի քանի  
ճաճանչներ միայն մնացած էին հորիզոնին վրայ,  
որք լուսագեղ սիւներ կը կազմէին եւ, անհամար  
երանգներով զարգարուած, կը բարձրանային դէպ  
կապոյտ գմբեթն, արեւմուտքի ամպերն, ոյց վրայ  
կ'երկարէին այդ սիւներ, մեղմիւ գունաւորուած,  
մերթ ծիրանի, մերթ բուստի խաւեր կը թուէին  
մեր հիացած աչքի, մինչ արեւի մեռնող ճաճանչ-

ներն իւրեանց հրաժեշտի վերջին համարոյով կը շինեցունէին երկինն, որ, լոյսէ մազերն արձակած, կը կարսիէր եւ կը տժգունէր հետըզնե-տէ . . . : Քեաղըտ — Խանէի գետակն, 'զոր արուեստն գեղեցիկ ձևերի մէջ դրած է գիւղին մինչեւ կոյսերական պալատներին առջեւ, կանաչների մէջէ կը սողոսկէր յստակ, իւր ալեակներին վրայ խոնարհած չէին մի քանի վարսաւոր ուռիներ եւ, գագաթ ի ջուր, երեկոյեան դեփիւտէն ծանր ծանր կը տատանէին : Շրջակայ լեռներն, 'զորս կը ծածկէին դալարիներ եւ ծաղիկներ, մի սխրալի երեւոյթ կը ներկայէին վերջաւայտի նուազկոտ նշոյլներին տակ : Անգորր եւ լուսթիւն տիրած էր ամեն կողմ, եւ աշխարհ կը սկսէր տխրիլ տակաւ առ տակաւ, քանի կը մատչէր սեւ գիշերն որ կը գար ծածկել 'զայն իւր խաւարէ պատանի տակ :

Ամեն բան վերջացած էր . այդ հրճուանքի օր հորիզոնին վրայ անհետացող արեւին հետ գնացած էր բազմապատկել բոլոր այն օրեր, որք ըզմեզ քայլ առ քայլ կը մատչեցորենն դէպ խոր անդունդն գերեզմանի, դէպ մեր յաւիտենական բնակավայր . . . :

Եւ երբ տուն դարձանք նորէն թաղուիլ աղմուկի վայրերին մէջ, ինչ կը բերէինք մեզ հետ այդ այնքան երջանիկ օրէ . — մի յիշատակէ զատ ոչինչ . . . . աւա՛ղ, այսպէս է մարդկային կեանքն :

Իէրա, մայիս 1878 .

ԱՌ ՓՈՒՔՐԻԿՆ ԼԵՒՈՆԻԿ՝

Ո՛ր Լեւոնիկ, խօ՛ւ թիթեռնիկ  
որ թռչըտիլ լոկ գիտէ,  
Աշխարհ եւ կեանք, ամեն բան քեզ  
գո՛գ երազ է ոսկիէ .  
Քո տունի մէջ, դրա՛խտ քեզ համար,  
դու երջանիկ կը շնչես .  
Ժպտիլ, բերկրիլ, կայտաւել, երգել .  
օ՛հ, դու միայն 'զա՛յդ գիտես :

Խինդ եւ ըզմայլ կը ծաւալես  
քո ժըլիտով անապակ,  
Չերդ ծաղիկ որ նոր կը փթթի  
արեւին եւ ցօղին տակ .  
Վե՛հ ճակատդ ուր անբըծութիւն  
լուսապըտակ դըրած է,  
Իրըր աստըղ կայծկտալով  
մեր հէզ սիրտեր կը վառէ :

Ո՛ր դու մանկիկ անխորձառու,  
աշխարհըն չ'ես ճանաչեր,  
Ոչ իւր նենգեր, ոչ իւր ցաւեր  
եւ ոչ իւր բիւր ոճիրներ,  
Քեզ ծանօթ չ'են հեկեկ եւ կոծ :  
Մի արեւ ես լուսավառ  
'ի երջանկութիւն քո սիրտի՛ մէջ  
դրած է իւր գահ վեհափառ :

\* Այս ստանաւոր հրատարակուած է Թեղեհուշ եկեղ-ի մէջ 3

Իւր իոյնի մէջ պատրաստուած  
 զերդ մի թռչնիկ նորածին ,  
 Դու սէր եւ խնամ կը վայելես  
 տակ մայրական թեւերին .  
 Մայրիդ ծոցն է ( օրհնեալ աղբիւր )  
 որ քեզ տուաւ կաթ եւ կեանք ,  
 Քաղէ անտի եւ դու այժմ  
 լոյս , կրթութիւն եւ բերկրանք :

Անմեղութիւն քո գեղեցիկ  
 աչքերի մէջ կը ցոլայ ,  
 Որպէս ճաճանչ որ արծաթէ  
 ջինջ լիճին մէջ կը շողայ .  
 Օ՛հ , դու , լեւոն , դեռ չ'ես գիտեր  
 քո սիրտ քանի՛ անրիժ է ,  
 Քանի՛ վրսեմ է մանկութիւն ,  
 'զոր բիւր հըրճիւ կ'ողողէ :

Վայելէ դու ուրեմն այդ կեանք ,  
 'զոր կը բաշխէ քեզ երկին ,  
 Այդ աստղի՛ կեանք , ուր մարդ կարծես  
 մի եղբայր է հրեշտակին .  
 Այդ կեանք , ուր ոչ արտօսըր կայ ,  
 ոչ ալ թախիժ , ոչ խաւար .  
 Այդ կեանք , 'զոր էն կը զարդարէ  
 ճաճանչներով լուսապար :

Եպոտէ՛ գէթ այժմ , անմե՛ղ մանկիկ ,  
 զի օրն ունի իւր գիշեր ,  
 Զի հրճուանքէն յետոյ յաճախ  
 մեք կը կըրեմք տառապներ :

Զի դարունին անվրէպ աշուն  
 կը յաջորդէ ցուրտ , տըխուր :  
 Զուարթ լեր միշտ եւ , խինդով լի ,  
 մանկութիւնըդ դու անցուր :

Ծիծաղ եւ խանդ լոկ ունեցիր  
 մինչ դու կ'ապրիս մայրիդ քով ,  
 Հեռի խարդախ այս աշխարհէ ,  
 մի յարկի տակ անվրդով .  
 Պարտէզիդ մէջ , օ՛ն , ոստոստէ ,  
 ո՛ նոր բացուող դու շուշան ,  
 Ծաղիկների մէջ գեղաթոյր ,  
 որք անմեղ են քեզ նըման :

Ա՛հ , մի՛ սիրեր դու այս աշխարհ .  
 նա կեղծ փայլով լի է միշտ ,  
 Նա շուտ կ'եղծէ ինչ որ պարզ է ,  
 յստակ , անրիժ եւ անվիշտ :  
 Զգո՛յ՛ լեր դու , զի փուշ ունին  
 ամեն վարդերն յուսափթիթ  
 Զի թոյն ունին մերթ գեղ եւ սէր ,  
 զի կեղծ է մերթ մեր ժըսիտ . . . .

Բրի՛նկիթօ , յուլիս 1878 .



ԺԴ

ԱՌԱՌՈՏ\*

Անհուն կամարն եթերային ,  
 'զոր գիշերն էր մըթագնած ,  
 Լոյսէ մատոյն Արարիչի  
 կը պարզուի վեհապանծ .  
 Եւ հորիզոն , 'զոր աղջամուղջ  
 իւր մըջուշով կը ծածկէր ,  
 Օ՛հ , վեր կ'առնու իւր սուգի քօղ  
 եւ կը շողայ անըստուեր :

Նոր ճաճանչներ կապուտակըն  
 նոր լոյսերով կը պճնեն ,  
 Եւ անդ ոսի տառերով  
 գո՛գ արշալոյս կը հիւսեն ,  
 Նոր գեղ տալով վարդի շուրթըն  
 թրջօղ ցօղին անապակ ,  
 Որ կը փայլի անմեղ կոյսի  
 արտօսրին պէս անուշակ . . . :

Դէպ արեւելք , կանաչագարդ  
 բըլուրներին վերայէ ,  
 Մի լուսափայլ ճակատ կարծես  
 կրրակ եւ բոց կը սփռէ .  
 Եւ անդ երկին բիւր հըրալից  
 երանգներէ շառագնած ,  
 Կը փողփողի եւ կը վառի  
 այդ բոցերէ արծարծուած :

\*Այս ստանաւոր ալ հրատարակուած է Թեյֆուսէ եփտուի մէջ

Արեւն է այն որ աշխարհի  
 ողջոյն կը տայ խընդաղին ,  
 Տակաւ տակաւ բարձրանալով  
 հորիզոնէն զէպ երկին ,  
 Եւ սփռելով մեր սիրտի մէջ  
 իւր լուսագեղ ճաճանչներ ,  
 Կ'աւետէ մեզ նոր օր , նոր խինդ  
 եւ կենսատու նոր յոյսեր :

Մերթ կաթնաթոյր , մերթ թուխ ամպեր  
 եթերն աստ անդ կը ծածկեն  
 Որպէս , աւա՛ղ , դառըն վիշտեր  
 մեր հողիններ կը ստուերեն . . . :

Անդորըր չ'է Պրոպանտիս .  
 բիւր կոհակներ փրփրալի  
 Անդ կը ծնին եւ կը մեռնին ,  
 Ղերգ պըղսըջակ օճառի :

Եւ անդ , հեռին , հորիզոնին  
 վերայ , 'զոր լոյս կ'ողողէ ,  
 Գո՛գ ջուրն ամպին կը խառնուի ,  
 ծովըն երկին՝ կը գրկէ .  
 Ո՛ միութիւն խորհրդաւոր ,  
 ո՛ հրաշալիք բընական ,  
 Զ'ե՞ս ապացոյց թէ Արարիչ  
 մահացուն մօտ է այդքան . . . :

Լուռ է ընութիւն : այլ մերթ ընդ մերթ  
 հեզ շըռուկներ կը լըսուին .  
 — Ալիքն է որ աւազին վրայ  
 կը փըշրուի տըխրաղին ,

Կա՛ք զեփիւռն է որ սուլելով  
 սաղարթախիտ ծառերէ՛ ,  
 Մի ներդաշնակ սօսաւիւնով  
 մեզ նուագներ կը ձօնէ :

Թռչուններըն ծառէ ի ծառ  
 կը թռուչըտին զուարթուն ,  
 Օ՛հ , չ'են երգեր , չ'ունին դայլայլ  
 կարծես տխուր են համբուն .  
 Քիւր ծաղիկներ պարտէզին մէջ  
 թոյրով , բոյրով կը ժպտին ,  
 Մինչ թիթեռնիկն իւրեանց շուրթի  
 համբոյր կը տայ ջերմագին :

Քանի՛ քաղցր է վըկայ լինիլ  
 մի այսքան վեհ տեսիլի ,  
 Վարդերի՛ մէջ , մարգին վըրայ ,  
 զով շուքին տակ մի ծառի .  
 Եւ մարդ յայնժամ քանի՛ յոյզով  
 կը նըկատէ այդ պատկեր ,  
 Ուր ամեն բան ունի իւր մէջ  
 իւր անիմաց խորհուրդներ :

Յայնժամ հոգին կը վերանայ ,  
 ըիւր խոհանքով համակուած ,  
 Դէպ մի աշխարհ ուր ոչ ցաւ կայ  
 եւ ոչ իսաւար եւ ոչ լաց .  
 Երազի՛ դրախտ , ուր ապրօղըն  
 'զինք մի աստուած կը կարծէ ,  
 Ձի կը զգայ թէ չ'ունի անդ մահ ,  
 'ւ երջանկութի՛ւն կը գրկէ . . . .

Ո՛ հայր գթած , վեհ փառքիդ մէջ  
 կ'օրհնեմք ըզ քեզ անդադար ,  
 Ըզ քեզ որ վիշտ տալէ յետոյ  
 եւ մեզ կը տաս մըխիթար .  
 Երկիր գըժո՛խք է մեր առջեւ ,  
 դու մերթ եղեմ կ'անես 'գայն .  
 Շընորհապարտ է քեզ աշխարհ .  
 օրհնեա՛լ լեր դու յաւիտեան :

Բրի՛նկիրօ , օգոստոս 1878 .




ՎՐԻՊԱԿ

Էջ	Տող	Սխալ	Ուղղ
50	11	նուաղուն	նուաղուն
50	50	խորհրդաւոր	խորհրդաւոր է
52	5	այլայած	այլայած
52	16	դորդ ոջ	դորդ ոջ
54	4	Պ. Զ. Գ.	Պ. Յ. Գ.
51	19	յանվար	յանվար

Յ Ա Ն Կ

Զօն . . . . .	5
Նախարան . . . . .	7
Գլորոց . . . . .	9
Գրականութիւն եւ Հայ - Գրական ընկերութիւն . . . . .	13
Աղէտ եւ սիրի . . . . .	21
Գիշեր յեւ խոհանք . . . . .	26
Վստիորի կեանքն . . . . .	29
Վչտակցութիւն . . . . .	54
Յարատեւ աշխատանք . . . . .	57
Մաղթանք առաւօտեան . . . . .	46
Ամուսնութիւն . . . . .	48
Ա. Ախակ . . . . .	52
Լեռախոտագիտութիւն . . . . .	54
Մի ողջոյն առ մայիս . . . . .	58
Ա. Կոբրիկն Լեւոնիկ . . . . .	65
Առաւօտ . . . . .	68





624P

2013

